2014

ՀՀ կենտրոնական բանկի բանբեր

2-րդ եռամսյակ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ֆինանսական համակարգը 5

Վճարահաշվարկային համակարգի զարգացումներ 16

Ֆինանսական համակարգի կարգավորման դաշտի փոփոխություններ 20

Ֆինանսական համակարգի ցուցանիշներ 22

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 28

Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների վիճակը և կազմը 29

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վիճակագրության վարչություն

Հայաստանի Հանրապետության վճարային հաշվեկշիռը և միջազգային ներդրումային դիրքը 2013 թվականին 31

Հայաստանի Հանրապետության արտաքին պարտքը 2013 թվականին 50

ՀՀ ֆինանսական համակարգը 2014 թվականի երկրորդ եռամսյակում

ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԲԱՆԿԵՐԸ

2014 թվականի հունիսի 30-ի դրությամբ ՀՀ տարածքում գործել են 21 առևտրային բանկեր՝ 497 մասնաճյուղով և մեկ զարգացման բանկ (Համահայկական բանկը):

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼԸ

Հաշվետու եռամսյակում բանկային համակարգի ընդհանուր կապիտալն աճել է 1.5%-ով (12-ամսյա աճը կազմել է 14.9%) և կազմել 473.1 մլրդ դրամ: Ընդհանուր կապիտալի աճն ապահովվել է եռամսյակի 10.6 մլրդ դրամ զուտ շահույթի հաշվին: Կանոնադրական կապիտալը եռամսյակի ընթացքում ավելացել է 4.7%-ով (12.8 մլրդ դրամով) և կազմել 282.8 մլրդ դրամ՝ պայմանավորված նախորդ ժամանակաշրջանի չբաշխված շահույթի հաշվին կանոնադրական կապիտալի համալրմամբ:

Ընդհանուր կապիտալի և ընդհանուր ակտիվների հարաբերակցության ցուցանիշը աճել է 0.3 տոկոսային կետով՝ եռամսյակի վերջին կազմելով 16.2%:

Առևտրային բանկերի ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվային ցուցանիշը նվազել է 0.2 տոկոսային կետով և կազմել 16.2%:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունները հաշվետու եռամսյակում նվազել են 0.4%-ով (12-ամսյա աճը կազմել է 10.0%) և կազմել 2 տրլն 449.9 մլրդ դրամ: Ընդ որում, պարտավորությունների աճ արձանագրվել է 13, իսկ նվազում՝ 9 բանկում:

Ընդհանուր պարտավորությունների նվազումը հիմնականում պայմանավորվել է իրավաբանական և ֆիզիկական անձանց ընդհանուր ավանդների 1.3% (12-ամսյա աճը կազմել է 14.9%) նվազմամբ:

30.06.2014 թ. դրությամբ իրավաբանական և ֆիզիկական անձանց ժամկետային ավանդները կազմել են 1 տրլն 537.5 մլրդ դրամ: Ըստ ժամկետային կառուցվածքի՝ ցպահանջ և ժամկետային ավանդների տեսակարար կշիռները կազմել են համապատասխանաբար 33.0% և 67.0% (31.03.2014 թ. դրությամբ՝ համապատասխանաբար 33.4% և 66.6%):

Իրավաբանական անձանց ցպահանջ և ժամկետային ավանդները նվազել են 8.8%-ով և կազմել 564.9 մլրդ դրամ, ֆիզիկական անձանց ցպահանջ և ժամկետային ավանդներն ավելացել են 3.6%-ով և կազմել 972.6 մլրդ դրամ:

Ըստ արժութային կառուցվածքի՝ դրամային ավանդները եռամսյակի ընթացքում աճել են 4.5%-ով, իսկ արտարժութային ավանդները նվազել են 3.6%-ով: Արդյունքում՝ արտարժութային ավանդների տեսակարար կշիռը ընդհանուր ավանդներում նվազել է 1.7 տոկոսային կետով՝ եռամսյակի վերջին կազմելով 70.3%:

Ընդհանուր պարտավորությունների կառուցվածքում 1.5 տոկոսային կետով ավելացել է ֆիզիկական անձանց ավանդների տեսակարար կշիռը և 2.1 տոկոսային կետով նվազել իրավաբանական անձանց ավանդների տեսակարար կշիռը:

Բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունների կառուցվածքը



1. Ֆիզիկական անձանց ցպահանջ ավանդներ, 2. Իրավաբանական անձանց ցպահանջ ավանդներ, 3. Ֆիզիկական անձանց ժամկետային ավանդներ, 4. Իրավաբանական անձանց ժամկետային ավանդներ, 5. Պարտավորություններ բանկերի (ներառյալ՝ ԿԲ) նկատմամբ, 6. Պարտավորություններ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ, 7. Պարտավորություններ Կառավարության նկատմամբ, 8. Այլ պարտավորություններ

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՏԻՎՆԵՐԸ

Բանկային համակարգի ընդհանուր ակտիվները հաշվետու եռամսյակում նվազել են 0.1%-ով (12-ամսյա աճը կազմել է 10.7%) և եռամսյակի վերջին կազմել 2 տրլն 923.1 մլրդ դրամ: Ընդ որում՝ ակտիվների աճ արձանագրվել է 13, իսկ նվազում՝ 9 բանկում:

Ակտիվների կազմում հիմնականում նվազել են ԿԲ-ում թղթակցային հաշիվները՝ 22.1%-ով (12-ամսյա աճը՝ 21.0%) և աճել տնտեսությանը տրամադրված վարկերը (ներառյալ՝ լիզինգը և ֆակտորինգը)՝ 2.8%-ով (12-ամսյա աճը կազմել է 11.1%):

Հաշվետու եռամսյակի վերջի դրությամբ տնտեսությանը տրամադրված վարկերի ծավալը (ներառյալ՝ լիզինգը և ֆակտորինգը) կազմել է 1 տրլն 807.2 մլրդ դրամ: Իրավաբանական անձանց, ֆիզիկական անձանց և բանկերի հետ կապված անձանց ու աշխատակիցներին տրամադրված վարկերի ծավալներն աճել են համապատասխանաբար 2.2%-ով, 3.8%-ով և 0.6%-ով՝ եռամսյակի վերջին կազմելով 1 տրլն 18.7 մլրդ դրամ, 693.8 մլրդ դրամ և 73.8 մլրդ դրամ: Լիզինգի ու ֆակտորինգի ընդհանուր ծավալը (առանց միջբանկային լիզինգի և ֆակտորինգի) աճել է 9.9%-ով և կազմել 20.9 մլրդ դրամ:

Բանկային համակարգի ընդհանուր ակտիվների ծավալները



Բանկային համակարգի ընդհանուր ակտիվների կառուցվածքը



1. Կանխիկ դրամական միջոցներ, 2. Թղթակցային հաշիվներ ԿԲ-ում և այլ պահանջներ ԿԲ-ի նկատմամբ, 3. Թղթակցային հաշիվներ բանկերում, 4. Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ, 5. Պետական արժեթղթեր, 6. Վարկեր իրավաբանական անձանց, 7. Վարկեր ֆիզիկական անձանց, 8. Վարկեր բանկերի հետ կապված անձանց և աշխատակիցներին, 9. Հիմնական միջոցներ, 10. Այլ ակտիվներ

Հաշվետու եռամսյակում ակտիվների կառուցվածքում համեմատաբար զգալի՝ 2.9 տոկոսային կետով նվազել է ԿԲ-ում թղթակցային հաշիվների տեսակարար կշիռը և կազմել 10.4%, 1.7 տոկոսային կետով աճել է տնտեսությանը տրամադրված վարկերի տեսակարար կշիռը և կազմել 61.1%:

Ըստ արժութային կառուցվածքի՝ դրամային և արտարժութային վարկերը (ներառյալ՝ լիզինգը և ֆակտորինգը) աճել են համապատասխանաբար 3.5%-ով և 2.5%-ով՝ եռամսյակի վերջին կազմելով 657.4 մլրդ դրամ և 1 տրլն 149.8 մլրդ դրամ: Արդյունքում՝ արտարժութային վարկերի տեսակարար կշիռը ընդհանուր վարկերում նվազել է 0.2 տոկոսային կետով՝ եռամսյակի վերջին կազմելով 63.6%:

Բանկային համակարգի կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկային ներդրումների ծավալները



Բանկային համակարգի կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկային ներդրումների կառուցվածքը



1. Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն, 2. Մշակող արդյունաբերություն, 3. Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում, 4. Շինարարություն, 5. Առևտուր, 6. Ֆինանսական գործունեություն, 7. Հիփոթեքային վարկեր, 8. Սպառողական վարկեր, 9. Տնտեսության այլ ճյուղեր

Ըստ տնտեսության ճյուղերի՝ համեմատաբար բարձր աճի տեմպ գրանցվել է 1) մշակող արդյունաբերությանը, 2) գյուղատնտեսության, անտառային տնտեսության և ձկնորսության ոլորտին տրամադրված և 3) հիփոթեքային վարկերում՝ համապատասխանաբար 7.1%, 5.8% և 4.0%:

Վարկային ներդրումներում մեծ տեսակարար կշիռ ունեն սպառողական, առևտրի և մշակող արդյունաբերության ճյուղերին տրամադրված վարկերը՝ համապատասխանաբար 21.5%, 18.4% և 10.1%:

Վարկային ներդրումների ռիսկայնության դասերի առումով՝ չաշխատող վարկերի և դեբիտորական պարտքերի տեսակարար կշիռը հաշվետու եռամսյակում մնացել է անփոփոխ՝ 5.6%: Հսկվող դասի վարկերը և դեբիտորական պարտքերը կազմել են ընդհանուրի 2.9%-ը, ոչ ստանդարտ դասի վարկերը և դեբիտորական պարտքերը՝ 1.9%-ը, կասկածելի դասի վարկերը և դեբիտորական պարտքերը՝ 0.9%-ը (31.03.2014 թ. դրությամբ՝ համապատասխանաբար 3.4%,-ը 1.4%-ը, 0.7%-ը):

Առևտրային բանկերի ընդհանուր և ընթացիկ իրացվելիության նորմատիվային ցուցանիշները եռամսյակի ընթացքում նվազել են համապատասխանաբար 2.1 և 10.5 տոկոսային կետով՝ կազմելով 27.5% և 135.1%:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԸ

2014 թվականի առաջին կիսամյակում բանկային համակարգի զուտ շահույթը (շահույթը հարկումից հետո)՝ հաշվարկված ըստ վերահսկողական հաշվետվությունների, կազմել է 18.3 մլրդ դրամ[1], շահութաբերությունը ըստ ակտիվների[2] (RoA)՝ 1.3%, շահութաբերությունն ըստ կապիտալի (RoE)՝ 8.0%: Տարվա ընթացքում շահույթով են աշխատել 16, իսկ վնասով՝ 6 բանկ:

Տարվա ընթացքում բանկային համակարգի զուտ շահույթը՝ հաշվարկված Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, կազմել է 17.9 մլրդ դրամ: Շահութաբերությունը (տարեկանացված) ըստ ակտիվների (RoA) և շահութաբերությունն ըստ կապիտալի (տարեկանացված) (RoE) կազմել են համապատասխանաբար 1.2% և 7.4%:

Ըստ ՀՀ կենտրոնական բանկ ներկայացվող վերահսկողական հաշվետվությունների՝ 2014 թվականի առաջին կիսամյակում բանկային համակարգի համախառն եկամուտները և համախառն ծախսերը կազմել են համապատասխանաբար 282.0 մլրդ և 258.1 մլրդ դրամ:

Բանկային համակարգի եկամուտների և ծախսերի կառուցվածքը



Տոկոսային եկամուտների գերակշիռ մասը՝ 84.5%-ը, բաժին է ընկել տնտեսությանը տրամադրված վարկերից ստացված եկամուտներին: Ոչ տոկոսային եկամուտների կազմում մեծ տեսակարար կշիռ են ունեցել ստացված միջնորդավճարներից եկամուտները և արտարժույթի առք ու վաճառքից ստացված զուտ եկամուտները՝ համապատասխանաբար 45.7% և 17.5%:

---

[1] ԿԲ ներկայացվող հաշվետվությունների և ՖՀՄՍ համաձայն՝ շահույթի մեծությունների խոշոր տարբերությունը հիմնականում պայմանավորված է ստանդարտ ակտիվների գծով 1%-ի չափով ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին հատկացումներ կատարելու փաստով, քանի որ բանկերը այդ չափով ծախս են ճանաչում:

[2] Ըստ ակտիվների շահութաբերության (RoA) ցուցանիշը հաշվարկվել է որպես զուտ շահույթի (շահույթ հարկումից հետո) և տարեսկզբից միջին օրական ընդհանուր ակտիվների հարաբերակցություն: Ըստ կապիտալի շահութաբերության (RoE) ցուցանիշը հաշվարկվել է որպես զուտ շահույթի (շահույթ հարկումից հետո) և տարեսկզբից միջին օրական ընդհանուր կապիտալի հարաբերակցություն:

Տոկոսային ծախսերում շարունակել են մեծ տեսակարար կշիռ ունենալ ժամկետային ավանդների գծով տոկոսային ծախսերը և առևտրային բանկերից և ֆինանսավարկային կազմակերպություններից ներգրավված միջոցների գծով տոկոսային ծախսերը՝ համապատասխանաբար 58.6% և 17.6%:

Ոչ տոկոսային ծախսերում զգալի տեսակարար կշիռը՝ 50.4%-ը, բաժին է ընկել աշխատակիցների աշխատավարձին և դրան հավասարեցված այլ վճարներին:

Բանկային համակարգի ընդհանուր զուտ մասհանումների[3] մեծությունը կիսամյակի ընթացքում կազմել է 8.9 մլրդ դրամ կամ միջին եռամսյակային ընդհանուր ակտիվների 0.3%-ը:

ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2014 թվականի հունիսի 30-ի դրությամբ ՀՀ տարածքում գործել են 33 վարկային կազմակերպություններ՝ 137 մասնաճյուղերով:

Վարկային կազմակերպությունների ընդհանուր ակտիվները հաշվետու եռամսյակում աճել են 7.1%-ով (12-ամսյա աճը կազմել է 27.7%) և կազմել 242.2 մլրդ դրամ: Ընդ որում, ակտիվների աճ է արձանագրվել 23, իսկ նվազում՝ 10 վարկային կազմակերպություններում:

Հաշվետու եռամսյակում վարկային կազմակերպությունների կողմից տնտեսությանը տրամադրված վարկերի ծավալը (ներառյալ՝ լիզինգը և ֆակտորինգը) ավելացել է 1.5%-ով (12-ամսյա աճը կազմել է 16.4%) և կազմել 147.8 մլրդ դրամ, ֆիզիկական անձանց տրամադրված վարկերն ավելացել են 3.4%-ով և կազմել 109.1 մլրդ դրամ, իրավաբանական անձանց և վարկային կազմակերպությունների հետ կապված անձանց ու աշխատակիցներին տրամադրված վարկերը նվազել են համապատասխանաբար 2.1%-ով և 21.4%-ով՝ եռամսյակի վերջին կազմելով համապատասխանաբար 26.8 մլրդ դրամ և 3.2 մլրդ դրամ, լիզինգի և ֆակտորինգի ծավալը նվազել է 0.6%-ով և կազմել 8.7 մլրդ դրամ:

Ըստ արժութային կառուցվածքի՝ տնտեսությանը տրամադրված դրամային վարկերի (ներառյալ՝ լիզինգը և ֆակտորինգը) ծավալը աճել է 4.5%-ով (4.1 մլրդ դրամով), իսկ արտարժույթով տրամադրված վարկերի ծավալը նվազել է 3.6%-ով (2.0 մլրդ դրամով): Արդյունքում՝ արտարժութային վարկերի տեսակարար կշիռը նվազել է 1.9 տոկոսային կետով և կազմել 36.1%:

Վարկային կազմակերպությունների ընդհանուր ակտիվների կառուցվածքը



1. Կանխիկ դրամական միջոցներ, 2. Պահանջներ ֆինանսական կազմ. նկատմամբ, 3. Վարկեր իրավաբանական անձանց, 4. Վարկեր ֆիզիկական անձանց, 5. Վարկեր վարկային կազմակերպության հետ կապված անձանց և աշխատակիցներին, 6. Լիզինգ, 7. Արժեթղթեր, 8. Հիմնական միջոցներ, 9. Այլ ակտիվներ

Ակտիվների կառուցվածքում տնտեսությանը տրամադրված վարկերի (ներառյալ՝ լիզինգը և ֆակտորինգը) տեսակարար կշիռը նվազել է 3.4 տոկոսային կետով և կազմել 61%, իսկ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների տեսակարար կշիռն ավելացել է 2.1 տոկոսային կետով և կազմել 31.8%:

Վարկային ներդրումների ռիսկայնության դասերի առումով՝ չաշխատող վարկերի և դեբիտորական պարտքերի տեսակարար կշիռը եռամսյակի ընթացքում նվազել է 0.4 տոկոսային կետով և եռամսյակի վերջին կազմել 4.3%: Վարկային կազմակերպությունների հսկվող դասի վարկերը և դեբիտորական

---

[3] Զուտ մասհանումը «Մասհանումներ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին»՝ ծախսային և «Վերադարձ ակտիվների հնարավոր կորուստների պահուստներից»՝ եկամտային հոդվածների տարբերությունն է, և վերլուծական նպատակով հիմնականում օգտագործվում է «զուտ մասհանումներ» ցուցանիշը: Տարվա ընթացքում նույն ակտիվի դասի վատացմանը և լավացմանը զուգընթաց ավելանում են համապատասխանաբար «Մասհանումներ» և «Վերադարձ» հոդվածները, ըստ որի էլ բացատրվում են համախառն ծախսերում և համախառն եկամուտներում վերջիններիս զգալի տեսակարար կշիռները:

պարտքերը կազմել են ընդհանուրի 2.7%-ը, ոչ ստանդարտ դասի վարկերը և դեբիտորական պարտքերը՝ 0.9%-ը, կասկածելի դասի վարկերը և դեբիտորական պարտքերը՝ 0.8%-ը (31.03.2014 թ. դրությամբ՝ համապատասխանաբար 2.6%, 1.4% և 0.8%):

Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի մեծությունը եռամսյակի ընթացքում աճել է 11.7%-ով (12-ամսյա աճը կազմել է 33.0%) և կազմել 96.4 մլրդ դրամ: Ընդհանուր կապիտալի աճը տեղի է ունեցել եռամսյակի 2.4 մլրդ դրամ զուտ շահույթի և 6 վարկային կազմակերպությունների կողմից ընդհանուր 9.5 մլրդ դրամ կանոնադրական կապիտալի համալրման հաշվին:

Հաշվետու եռամսյակում ընդհանուր պարտավորություններն ավելացել են 4.3%-ով (12-ամսյա աճը կազմել է 24.5%) և կազմել 145.8 մլրդ դրամ: Ընդհանուր պարտավորությունների աճը հիմնականում պայմանավորվել է ֆիզիկական և իրավաբանական անձանց նկատմամբ պարտավորությունների 7.7% աճով (2.4 մլրդ դրամով) և ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունների 2.6% աճով (2.2 մլրդ դրամով):

30.06.2014 թ. դրությամբ ֆիզիկական և իրավաբանական անձանց նկատմամբ ցպահանջ և ժամկետային պարտավորությունների ծավալը կազմել է 33.6 մլրդ դրամ: Եռամսյակի ընթացքում ֆիզիկական անձանց նկատմամբ պարտավորություններն ավելացել են 39.6%-ով և կազմել 14.8 մլրդ դրամ, իրավաբանական անձանց նկատմամբ պարտավորությունները նվազել են 8.8%-ով և կազմել 18.8 մլրդ դրամ:

Վարկային կազմակերպությունների զուտ շահույթը, հաշվարկված վերահսկողական հաշվետվությունների հիման վրա, 2014 թվականի առաջին կիսամյակում կազմել է 3.8 մլրդ դրամ, ընդ որում՝ շահույթով է աշխատել 28, իսկ վնասով՝ 5 վարկային կազմակերպություն:

Վարկային կազմակերպությունների եկամուտների և ծախսերի կառուցվածքը



Վարկային կազմակերպությունների՝ ըստ ակտիվների (RoA) և ըստ կապիտալի շահութաբերության (տարեկանացված) (RoE) ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 3.4% և 8.9%:

Տարեսկզբից վարկային կազմակերպությունների զուտ շահույթը, հաշվարկված ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, կազմել է 3.5 մլրդ դրամ: Վարկային կազմակերպությունների՝ ըստ ակտիվների շահութաբերությունը (RoA) 3.1% է, իսկ ըստ կապիտալի շահութաբերությունը (RoE)՝ 7.7%:

Տեղեկանք

ՀՀ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների արտաքին պարտքը 2014 թվականի երկրորդ եռամսյակի վերջին

Արտաքին աշխարհի նկատմամբ ՀՀ առևտրային բանկերի ու վարկային կազմակերպությունների վարկային պարտավորությունները[*] 2014 թվականի երկրորդ եռամսյակի վերջին կազմել են 1 135.6 մլն դոլար՝ նախորդ եռամսյակի վերջի 1 154.4 մլն դոլարի փոխարեն: Առևտրային բանկերն ու վարկային կազմակերպությունները 2014 թվականի երկրորդ եռամսյակում արտաքին աշխարհից ներգրավել են 577.4 մլն դոլար վարկային միջոցներ, նախկինում ձեռք բերված վարկերի դիմաց կատարել են 588.6 մլն դոլար հիմնական գումարի մարումներ[**]: Եռամսյակի ընթացքում վարկային մուտքերի 11.4 %-ը երկարաժամկետ վարկերի գծով է, ընդ որում՝ երկարաժամկետ վարկային մուտքերի 45.4 %-ը ստացվել է Լյուքսեմբուրգից, 9.6%-ը՝ ԱՄՆ-ից, 6.2%-ը՝ Գերմանիայից, 6%-ը՝ Ռուսաստանից, իսկ 24.5%-ը՝ միջազգային կազմակերպություններից:

2014 թվականի երկրորդ եռամսյակի վերջին առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների հիմնական վարկատու երկրներն են եղել Ռուսաստանը, որի տեսակարար կշիռը ամբողջի մեջ կազմել է 17.7% (նախորդ եռամսյակում՝ 16.5 %), Լյուքսեմբուրգը՝ 14.0 % (նախորդ եռամսյակում՝ 12.5%) և Նիդեռլանդները՝ 7.6% (նախորդ եռամսյակում՝ 7.6%): Վարկերի մոտ 36.5%-ը տրվել է միջազգային կազմակերպությունների կողմից:

2014 թվականի երկրորդ եռամսյակի վերջին ներգրավված վարկերի միջին կշռված տոկոսադրույքը նախորդ եռամսյակի վերջի համեմատ մի փոքր աճել է և կազմել 6.1%: Արտաքին վարկերի մոտ 48.2 %-ը լողացող (LIBOR, EURIBOR և այլն) տոկոսադրույքով է: Վարկերի միջին ժամկետայնությունը 4.3 տարի է: Կարճաժամկետ վարկերի տեսակարար կշիռն աճել է և կազմել ներգրավված վարկերի 11.3 %-ը:

ՀՀ առևտրային բանկերի մասնավոր պարտքը 2007-2014 թվականներին



** Ներառված չեն միջազգային ֆինանսական կազմակերպությունների և այլ վարկատուների կողմից տարբեր ծրագրերի շրջանակներում ՀՀ կառավարության միջոցով ստացված վարկերը:*

*** Նախորդ ժամանակահատվածի վերջի և հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում զուտ ներգրավված միջոցների գումարը տարբերվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի փաստացի ցուցանիշից, քանի որ ներգրաված միջոցներն արտահայտված են տարբեր արժույթներով, ուստի դրանք դոլարային համարժեքի վերածելիս ներառում են փոխարժեքի հաշվին վերագնահատումները:*

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

30.06.2014 թ. դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում ապահովագրական գործունեության լիցենզիա են ունեցել 9 ապահովագրական ընկերություններ[4]:

Ապահովագրական ընկերությունների ակտիվները եռամսյակի ընթացքում նվազել են 2.7%-ով՝ 30.06.2014 թ. դրությամբ կազմելով 46.2 մլրդ դրամ, պարտավորությունները նվազել են 4.0%-ով՝ կազմելով 29.2 մլրդ դրամ: Ընդհանուր կապիտալը նվազել է 0.5%-ով՝ կազմելով 17.0 մլրդ դրամ:

Ակտիվների կազմում համեմատաբար մեծ տեսակարար կշիռ են ունեցել ավանդները բանկերում (31.8%), պետական արժեթղթերը (18.8%) և ուղղակի ապահովագրության գծով ստացվելիք գումարները (11.4%):

Պարտավորություններում համեմատաբար մեծ տեսակարար կշիռ են ունեցել չվաստակած ապահովագրավճարների պահուստը (39.9%) և պահանջների պահուստները (13.2%):

2014 թվականի առաջին կիսամյակում ապահովագրական ընկերությունների՝ վերահսկողական հաշվետվությունների հիման վրա ստացված զուտ շահույթը կազմել է 1.7 մլրդ դրամ:

ՖՀՄՍ համաձայն՝ ապահովագրական ընկերությունների զուտ շահույթը 2014 թվականի առաջին կիսամյակում կազմել է 1.7 մլրդ դրամ:

Հաշվեգրված ապահովագրավճարների մեծությունը առաջին վեց ամիսներին կազմել է 15.7 մլրդ դրամ, իսկ վերաապահովագրողին փոխանցվող ապահովագրավճարները՝ 1.4 մլրդ դրամ կամ ապահովագրավճարների 9.1%-ը:

[4] 30.06.2014 թ. ամփոփված են փաստացի գործող և հաշվետու 8 ապահովագրական ընկերությունների ցուցանիշները, քանի որ 1 ընկերություն, ունենալով գործունեության լիցենզիա, չի իրականացնում ապահովագրական գործունեություն:

2013 թվականի առաջին կիսամյակի ընթացքում հաշվեգրված ապահովագրավճարների կառուցվածքն ըստ ապահովագրության դասերի



2014 թվականի առաջին կիսամյակի ընթացքում հաշվեգրված ապահովագրավճարների կառուցվածքն ըստ ապահովագրության դասերի



1. Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն (ԱՊՊԱ), 2. Առողջության, 3. Ցամաքային տրանսպորտի, 4. Հրդեհից և բնական աղետներից, 5. Դժբախտ պատահարներից, 6. Ընդհանուր պատասխանատվության, 7. Փոխադրվող գույքի, 8. Աջակցության, 9. Ապահովագրության այլ դասեր

Հաշվեգրված ապահովագրական հատուցումների մեծությունը 14.2 մլրդ դրամ է, իսկ վերաապահովագրողներից ստացվող ապահովագրական հատուցումների գումարները՝ 6.0 մլրդ դրամ կամ ապահովագրական հատուցումների 42.3%-ը:

2013 թվականի առաջին կիսամյակի ընթացքում հաշվեգրված ապահովագրական հատուցումների կառուցվածքն ըստ ապահովագրության դասերի



2014 թվականի առաջին կիսամյակի ընթացքում հաշվեգրված ապահովագրական հատուցումների կառուցվածքն ըստ ապահովագրության դասերի



1. Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն (ԱՊՊԱ), 2. Առողջության, 3. Ցամաքային տրանսպորտի, 4. Հրդեհից և բնական աղետներից, 5. Դժբախտ պատահարներից, 6. Ընդհանուր պատասխանատվության, 7. Փոխադրվող գույքի, 8. Աջակցության, 9. Ապահովագրության այլ դասեր

Ապահովագրական ընկերությունների կողմից կնքված պայմանագրերի և ապահովագրական գումարների կառուցվածքն ըստ ապահովագրության դասերի

Պայմանագրերի կառուցվածքն ըստ ապահովագրության դասերի՝ 30.06.2014 թ. դրությամբ



Ապահովագրական գումարների կառուցվածքն ըստ ապահովա•ության դասերի՝ 30.06.2014 թ. դրությամբ



1. Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն (ԱՊՊԱ), 2. Առողջության, 3. Ցամաքային տրանսպորտի, 4. Հրդեհից և բնական աղետներից, 5. Դժբախտ պատահարներից, 6. Ընդհանուր պատասխանատվության, 7. Փոխադրվող գույքի, 8. Աջակցության, 9. Ապահովագրության այլ դասեր

30.06.2014 թ. դրությամբ ապահովագրական ընկերություններն ունեցել են ապահովագրության 618.3 հազար գործող պայմանագրեր, որոնց ապահովագրական գումարների մեծությունը 9.6 տրլն դրամ է: Ապահովագրական գումարներից վերաապահովագրողներին փոխանցված ռիսկերի վերաապահովագրական գումարների մեծությունը 2.8 տրլն դրամ է կամ ապահովագրական գումարների 28.9%-ը:

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

2014 թվականի հունիսի վերջի դրությամբ ՀՀ արժեթղթերի շուկայում գործել են ներդրումային ծառայություն մատուցող 21 բանկ և 8 ներդրումային ընկերություն:

30.06.2014 թ. դրությամբ ներդրումային ընկերությունների ընդհանուր ակտիվները կազմել են 28.8 մլրդ դրամ. նախորդ եռամսյակի համեմատ նվազել են 1.8%-ով: Ներդրումային ընկերությունների ընդհանուր կապիտալը նախորդ եռամսյակի համեմատ նվազել է 5.2%-ով և կազմել 5.2 մլրդ դրամ:

2014 թվականի երկրորդ եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, ՀՀ արժեթղթերի շուկայում ներդրումային գործունեության շրջանակներում իրականացված արժեթղթերի առուվաճառքի գործառնությունների ծավալը նվազել է 19.0%-ով՝ կազմելով 174.3 մլրդ դրամ: Կորպորատիվ պարտատոմսերով իրականացված գործառնությունների ծավալը նախորդ տարվա երկրորդ եռամսյակի համեմատ նվազել է 77.8 մլրդ դրամով և կազմել 22.5 մլրդ դրամ: Բաժնետոմսերով առուվաճառքի գործառնությունների ծավալը աճել է 57.0 մլրդ դրամով և կազմել 63.9 մլրդ դրամ: Պետական պարտատոմսերով առուվաճառքի գործառնությունների ծավալը նախորդ տարվա երկրորդ եռամսյակի համեմատ նվազել է 20.2 մլրդ դրամով և կազմել է 87.9 մլրդ դրամ: 2014 թվականի երկրորդ եռամսյակի արդյունքներով՝ ՀՀ արժեթղթերի շուկայի շրջանառության մեջ շարունակել են գերակշռել պետական պարտատոմսերով գործառնությունները՝ կազմել են 50.5%: Կորպորատիվ պարտատոմսերով և բաժնետոմսերով իրականացված գործառնությունների տեսակարար կշիռներն ընդհանուր շրջանառության մեջ կազմել են համապատասխանաբար 12.9% և 36.7%:

Ներդրումային ընկերությունների կողմից 2014 թ. երկրորդ եռամսյակում իրականացված արժեթղթերի առուվաճառքի գործառնությունների ծավալները



Ներդրումային ընկերությունների կողմից 2013-2014 թթ. երկրորդ եռամսյակներում իրականացված արժեթղթերի առուվաճառքի գործառնությունների ծավալները



Պետական պարտատոմսերի առուվաճառքի գործառնությունների մեջ գերակշռել են պետական միջնաժամկետ պարտատոմսերով իրականացված գործառնությունները (կազմել են պետական արժեթղթերով գործառնությունների 55.4%-ը): Պետական երկարաժամկետ և կարճաժամկետ պարտատոմսերով գործառնությունների տեսակարար կշիռները կազմել են ընդհանուր շրջանառության համապատասխանաբար 36.0%-ը և 8.5%-ը:

Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կարգավորվող շուկայում իրականացված արժեթղթերի առուվաճառքի գործառնությունները կազմել են ներդրումային գործունեության շրջանակներում իրականացված առուվաճառքի գործառնությունների ընդհանուր ծավալի 22.1%-ը:

Կարգավորվող շուկայում իրականացված գործառնությունների ծավալը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է մոտ ինը անգամ (34.3 մլրդ դրամով) և կազմել է 38.4 մլրդ դրամ, ընդ որում, շրջանառության 69.8%-ը կազմել են բաժնետոմսերով առուվաճառքի գործառնությունները, իսկ պետական և կորպորատիվ պարտատոմսերի առքուվաճառքի գործառնությունները կազմել են համապատասխանաբար 20.2%-ը և 8.1%-ը:

Ներդրումային գործառնությունների շրջանակներում իրականացված գործառնությունների մեջ 65.4%-ը ներդրումային ծառայություններ մատուցող առևտրային բանկերի կողմից իրականացված գործառնություններն են, 34.6%-ը՝ ներդրումային ընկերությունների կողմից իրականացված գործառնությունները:

Ներդրումային գործունեության շրջանակներում իրականացված ռեպո գործառնությունների ծավալը (ներառյալ՝ կարգավորվող շուկայում իրականացված ռեպո գործառնությունները) նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ աճել է 75.6%-ով և կազմել 732.0 մլրդ դրամ, որից 366.5 մլրդ դրամը կազմել են երկարաձգված գործարքները:

30.06.2014 թ. դրությամբ հավատարմագրային կառավարման վերցված միջոցների ծավալը կազմել է 2.3 մլրդ դրամ՝ նախորդ եռամսյակի վերջի համեմատ աճելով 43.4%-ով:

2014 թ. հունիսի վերջի դրությամբ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայում վարվել են 2083 անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրներ, իսկ ՀԿԴ-ում վարվող արժեթղթերի սեփականատերերի թիվը 105585 է:

30.06.2014 թ. դրությամբ կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված են եղել 16 թողարկողների 24 արժեթղթեր, այդ թվում՝ 12 բաժնետոմս (11 թողարկողի) և 12 պարտատոմս (7 թողարկողի): Թողարկողներից երկուսը հաշվետու են ինչպես բաժնետոմսերի, այնպես էլ պարտատոմսերի գծով: Թողարկողներից 6-ը ֆինանսական կառույցներ են: Բաժնետոմսերի ընդհանուր ծավալը 53.4 մլրդ դրամ է, իսկ պարտատոմսերի ծավալը՝ 15.4 մլրդ դրամ: Ընդ որում՝ թողարկված պարտատոմսերից 6-ը արտարժութային են, որոնց կշիռը ընդհանուր ծավալում 53% է: Երեք առևտրային բանկերի կողմից թողարկված բաժնային արժեթղթերի կշիռը կազմել է ընդհանուր բաժնետոմսերի 25%-ը, իսկ չորս ֆինանսական կառույցների կողմից թողարկված պարտատոմսերի կշիռը՝ ընդհանուր պարտատոմսերի 55%-ը:

ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2014 թ. երկրորդ եռամսյակի վերջի դրությամբ ՀՀ տարածքում գործել են դրամական փոխանցում իրականացնելու լիցենզիա ունեցող 6 կազմակերպություններ, որոնցից 2-ը ունեն նաև վճարային գործիքների պրոցեսինգ/քլիրինգ իրականացնելու լիցենզիա, 3-ը՝ էլեկտրոնային փող թողարկելու թույլտվություն և միայն վճարային գործիքների պրոցեսինգ/քլիրինգ իրականացնելու լիցենզիա ունեցող մեկ կազմակերպություն՝ «Արմենիան Քարդ» ՓԲԸ-ն:

Միայն դրամական փոխանցում իրականացնող կազմակերպությունները հաշվետու եռամսյակում աշխատել են 378 մլն դրամ շահույթով, իսկ վճարային գործիքների պրոցեսինգ/քլիրինգ և դրամական փոխանցումներ իրականացնող կազմակերպությունները՝ 196 մլն դրամ շահույթով:

Հաշվետու եռամսյակում միջազգային վճարային համակարգերին անդամակցելու միջոցով արտասահմանից ՀՀ ուղղված վճարումներ են սպասարկել դրամական փոխանցում իրականացնող 5 վճարահաշվարկային կազմակերպություններ: Դրամական փոխանցում իրականացնող կազմակերպությունների մասնաբաժինը միջազգային փոխանցումների և ստացումների ընդհանուր ծավալում (ներառյալ՝ առևտրային բանկերը) համապատասխանաբար կազմել է՝ արտասահման փոխանցումները՝ 0.3%-ը, իսկ արտասահմանից ստացումները՝ 1.0%-ը: Այդ կազմակերպությունները Հայաստանի Հանրապետության

իրենց հաճախորդներին հաշվետու ժամանակահատվածում կատարել են 1.8 մլրդ դրամի վճարում, իսկ արտասահման՝ 71 մլն դրամի փոխանցում: Ընդ որում, արտասահմանից ստացված մեկ փոխանցման միջին ծավալը 123 հազար դրամ է:

Վճարահաշվարկային կազմակերպությունների ֆինանսական վիճակը 2012-2014 թթ.



Վճարային գործիքների պրոցեսինգ/քլիրինգ և դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող 5 կազմակերպություններ մատուցել են կանխիկ միջոցներով վարձավճարների ընդունման ծառայություններ, այդ թվում 2-ը՝ տերմինալների միջոցով:

Վճարահաշվարկային կազմակերպությունները ընդունում են կոմունալ ծառայությունների, հեռախոսի և բջջային կապի, վարկերի մարմանն ուղղված միջոցների, բյուջե ուղղված տուգանքների և պետական տուրքերի, ինտերնետային կապի ծառայությունների դիմաց վճարներ և այլն: Մասնավորապես՝ վճարահաշվարկային 5 կազմակերպությունների գլխամասային գրասենյակների և մասնաճյուղերի միջոցով գանձվել է 28.6 մլրդ դրամ, որից 25.6-ը՝ կոմունալ վճարումների դիմաց: Բացի այդ, 2014 թ. երկրորդ եռամսյակի վերջի դրությամբ 2 վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից շահագործվող 1212 ինքնասպասարկման տերմինալների միջոցով գանձվել է 21.0 մլրդ դրամ (6.9 մլն գործառնություն), որից 7.8 մլրդ դրամը՝ կոմունալ վճարումների դիմաց:

Անկանխիկ եղանակով գանձվել է 389 մլն դրամ, որից 356 մլն դրամը՝ կոմունալ վճարումների դիմաց:

Վճարահաշվարկային կազմակերպությունները պրոցեսինգային/քլիրինգային ծառայություններ են մատուցել մի շարք առևտրային բանկերի: Առևտրային բանկերը, համագործակցելով վճարահաշվարկային կազմակերպությունների հետ, կոմունալ ծառայությունների վճարները գանձել են իրենց մասնաճյուղային ցանցի միջոցով, որտեղ եռամսյակի ընթացքում կատարվել է 1.3 մլրդ դրամ ընդհանուր ծավալով 448 հազար գործառնություն:

ՀՀ վճարահաշվարկային համակարգը 2014 թ. երկրորդ եռամսյակում դրսևորել է դինամիկ զարգացման միտումներ:

ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

ՀՀ տարածքում բանկային համակարգով իրականացված անկանխիկ վճարումների միջին օրական ծավալը հաշվետու եռամսյակում կազմել է 95.6 մլրդ դրամ (քանակը՝ 99 հազար), այդ թվում՝ Կենտրոնական բանկի վճարային համակարգերով իրականացված վճարումների միջին օրական ծավալը 50.7 մլրդ դրամ է, իսկ քանակը՝ 13 հազար (Կենտրոնական բանկի համակարգերով իրականացված վճարումների միջին օրական ծավալը նախորդ տարվա երկրորդ եռամսյակի համեմատ աճել է 44%-ով, իսկ քանակը նվազել է 34%-ով)[5]:

ՀՀ ԿԲ վճարային համակարգերի միջոցով իրականացված վճարումների միջին օրական քանակը և ծավալը (առանց բորսայական փոխանցումների)



Էլեկտրոնային վճարումների համակարգով կատարված միջին օրական փոխանցումները (առանց բորսայական փոխանցումների) 2013 թ. երկրորդ եռամսյակի համեմատ աճել են 41%-ով՝ կազմելով 46.7 մլրդ դրամ, իսկ քանակը նվազել է 34%-ով՝ կազմելով 13 հազար:

ՎՃԱՐԱՅԻՆ ՔԱՐՏԵՐ

2014 թ. երկրորդ եռամսյակի վերջի դրությամբ ՀՀ տարածքում գործող 21 առևտրային բանկերից 19-ը տրամադրել կամ սպասարկել են վճարային քարտեր: Ընդ որում, 19 առևտրային բանկերն էլ անդամակցում են «ArCa» քարտերով վճարումների միասնական համակարգին:

Քարտերի սպասարկման նպատակով հաշվետու ժամանակահատվածում տեղադրվել են 38 նոր ավտոմատ գանձման մեքենաներ և 2014 թ. երկրորդ եռամսյակի վերջի դրությամբ կազմել են 1335: Առևտրային բանկերի կողմից տեղադրված POS-տերմինալների ընդհանուր քանակը եռամսյակի ընթացքում նվազել է 30-ով՝ կազմելով 6959:

[5] *Մեթոդաբանական հստակեցման արդյունքում ԿԲ վճարահաշվարկային համակարգերով կատարված փոխանցումներում այսուհետ չեն ներառվում ԿԲ համախառն թղթային համակարգի ցուցանիշները, ինչպես նաև ճշգրտվել են թղթային վճարային հաձնարարականների ցուցանիշները:*

Շրջանառության մեջ գտնվող քարտերի ընդհանուր քանակը եռամսյակի վերջի դրությամբ կազմել է 1.6 մլն (նախորդ եռամսյակի համեմատ ավելացել է 1%-ով): Մասնավորապես՝ «ArCa» քարտերի քանակը նախորդ եռամսյակի վերջի համեմատ գրեթե չի փոփոխվել՝ կազմել է 567 հազար: Միջազգային քարտային համակարգերի քարտերի քանակն ավելացել է 2%-ով և կազմել 1.1 մլն քարտ: Այդ թվում՝ VISA-ն և MasterCard-ը ավելացել են 4-ական տոկոսով և կազմել համապատասխանաբար 702 հազար և 315 հազար:

ՀՀ-ում գործող առևտրային բանկերի թողարկած վճարային քարտեր



2014 թ. երկրորդ եռամսյակում ՀՀ տարածքում վճարային քարտերով իրականացվել է 298.0 մլրդ դրամի 6.1 մլն գործառնություն: Այդ թվում՝ քարտերով անկանխիկ գործառնությունների ծավալը 31.4 մլրդ դրամ է: Նշված անկանխիկ գործառնությունների ծավալում ինտերնետ միջավայրում իրականացված գործառնությունների ծավալը 6.0 մլրդ դրամ է (այդ թվում՝ էլեկտրոնային առևտուր՝ 1.2 մլրդ դրամ, քարտից քարտ փոխանցումներ՝ 4.8 մլրդ դրամ): Քարտերով անկանխիկ վճարումների ծավալը նախորդ տարվա երկրորդ եռամսյակի համեմատ ավելացել է 19%-ով և կազմել է քարտային գործառնությունների 10%-ը:

ՀՀ տարածքում վճարային քարտերով իրականացված միջին օրական գործառնությունները 2011 – 2013 թթ., ինչպես նաև 2011 -2014 թթ. եռամսյակների ընթացքում



ՀՀ տարածքում քարտեր սպասարկող սարքավորումների միջոցով կատարված գործառնությունները (2014 թ. երկրորդ եռամսյակ)

Սարքեր	Գործարքներ			
	ծավալը (մլն դրամ)	*քանակը*	*այդ թվում՝ «ԱրՔա» քարտերով*	
			ծավալը (մլն դրամ)	*քանակը*
Ավտոմատ գանձման սարքերի միջոցով	230585	5025452	65269	1614756
այդ թվում՝ անկանխիկ	1440	124517	116	42534
POS – տերմինալների/իմպրինտերների միջոցով	61410	706901	16146	175876
այդ թվում՝ անկանխիկ	23660	588958	7940	121888
Ինտերնետ միջավայրում	5973	396853	1145	105715
Ընդամենը	297969	6129235	82562	1896379
այդ թվում՝ անկանխիկ	31074	1110328	9201	270137

2012-2014 թթ. եռամսյակների ընթացքում մեկ վճարային քարտով կատարված գործառնությունների միջին օրական ծավալը



«ArCa» քարտերով կատարված գործառնությունների ծավալը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 22%-ով, իսկ քանակը՝ 15%-ով:

ՀՀ-ում գործող, ինչպես նաև արտասահմանյան բանկերի կողմից թողարկված քարտերով Հայաստանում իրականացված գործառնությունների ծավալը 2013 թ. երկրորդ եռամսյակի համեմատ ավելացել է 12%-ով՝ (կազմել է 298.0 մլրդ դրամ), իսկ քանակն ավելացել է 23%-ով (կազմել է 6.1 մլն): Միևնույն ժամանակ, ՀՀ-ում գործող բանկերի կողմից թողարկված քարտերով արտասահմանում կատարված գործառնությունների ծավալը և քանակը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են համապատասխանաբար 19%-ով և 39%-ով՝ կազմելով համապատասխանաբար 16.9 մլրդ դրամ և 362 հազար:

ՀՀ-ում գործող, ինչպես նաև արտասահմանյան բանկերի կողմից թողարկված VISA քարտերով Հայաստանում իրականացված գործառնությունների ծավալը 2013 թ. երկրորդ եռամսյակի համեմատ մնացել է գրեթե անփոփոխ, քանակն ավելացել է 23%-ով (505 հազարով), MasterCard-ով կատարված գործառնությունների ծավալն ավելացել է 40%-ով (16.6 մլրդ դրամով), քանակն ավելացել է 37%-ով (327 հազարով), միջազգային այլ քարտերով կատարված գործառնությունների ծավալն ավելացել է 5%-ով (1.0 մլրդ դրամով):

ՀՀ-ում գործող առևտրային բանկերի կողմից թողարկված VISA քարտերով արտասահմանում կատարված գործառնությունների ծավալը նախորդ տարվա երկրորդ եռամսյակի համեմատ ավելացել է 24%-ով (1.9 մլրդ դրամով), քանակն ավելացել է 36%-ով (59 հազարով), MasterCard-ով կատարված գործառնությունների ծավալն ավելացել է 18%-ով (857 մլն դրամով), քանակն ավելացել է 46%-ով (40 հազարով), իսկ միջազգային այլ քարտերով կատարված գործառնությունների ծավալը մնացել է անփոփոխ:

2014 թ. երկրորդ եռամսյակում վճարային քարտերով կատարված գործառնությունները

Վճարային քարտեր	Վճարային քարտերով կատարված գործառնությունները Հայաստանում (ՀՀ-ում գործող, ինչպես նաև արտասահմանյան բանկերի կողմից թողարկված քարտերով)		ՀՀ-ում գործող բանկերի կողմից թողարկված քարտերով գործառնությունները արտասահմանում	
	ծավալը (մլն դրամ)	*քանակը*	*ծավալը (մլն դրամ)*	*քանակը*
ArCa	82562	1896379	-	-
այդ թվում՝ անկանխիկ	9201	270137	-	-
VISA	137214	2665074	9897	222719
այդ թվում՝ անկանխիկ	10154	410105	6690	187343
Mastercard	58003	1220032	5491	125534
այդ թվում՝ անկանխիկ	9944	366280	4036	104738
Միջազգային այլ քարտեր	20189	347750	1552	14158
այդ թվում՝ անկանխիկ	1775	63806	644	8012
Ընդամենը	297969	6129235	16939	362411
այդ թվում՝ անկանխիկ	31074	1110328	11370	300093

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ

Ֆիզիկական անձանց կողմից առանց բանկային հաշվի բացման փոխանցումները ՀՀ տարածքում իրականացվում են առևտրային բանկերի և դրամական փոխանցում իրականացնող կազմակերպությունների միջոցով:

Միջազգային դրամական փոխանցումների համակարգերին մասնակից առևտրային բանկերի և վճարահաշվարկային կազմակերպությունների միջոցով Հայաստանի Հանրապետություն փոխանցումների ծավալը 2014 թ. երկրորդ եռամսյակում կազմել է 172.5 մլրդ դրամ (քանակը՝ 929 հազար), որը մոտ 7 անգամ գերազանցել է արտասահման կատարված փոխանցումների ծավալը: Այդ համակարգերով ստացված միջոցների ծավալը նախորդ տարվա երկրորդ եռամսյակի համեմատ ավելացել է 1%-ով: Միջազգային դրամական փոխանցումների համակարգերով Հայաստանի Հանրապետություն կատարված մեկ փոխանցման միջին ծավալը 186 հազար դրամ է: Առևտրային բանկերի միջոցով միջազգային դրամական փոխանցումների համակարգերով դրամական միջոցների զուտ ներհոսքը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել է 1%-ով և կազմել 148.9 մլրդ դրամ:

ՀՀ առևտրային բանկերի թղթակցային հաշիվներով իրականացված փոխանցումներում ֆիզիկական անձանց ուղղված վճարումները կազմել են 48.6 մլրդ դրամ՝ նախորդ տարվա երկրորդ եռամսյակի համեմատ նվազելով 18%-ով: Մեկ վճարման միջինը 3.3 մլն դրամ է, որը 2013 թ. երկրորդ եռամսյակի համեմատ նվազել է մոտ 1.0 մլն դրամով: Միաժամանակ, բանկերի թղթակցային հաշիվներով ֆիզիկական անձանց փոխանցումներն արտասահման կազմել են 56.4 մլրդ դրամ. նախորդ տարվա երկրորդ եռամսյակի համեմատ նվազել են 2%-ով:

Ֆինանսական համակարգի կարգավորման դաշտի փոփոխություններ

2014 թվականի երկրորդ եռամսյակի ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի կողմից ընդունվել, ինչպես նաև փոփոխվել և (կամ) լրացվել են հետևյալ իրավական ակտերը.

Բանկային գործունեության կարգավորման դաշտում

1. Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ լրացումներ և փոփոխություններ են կատարվել «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ում, որոնց համաձայն՝
   - կապիտալի համարժեքության նորմատիվների հաշվարկում արտոնյալ բաժնետոմսերի և լրացուցիչ նորմատիվային կապիտալի մասնաբաժինները սահմանափակվել են: Մասնավորապես սահմանվել է, որ.
     ա/ 2018 թվականի հունվարի 1-ից արտոնյալ բաժնետոմսերը բանկի հիմնական կապիտալի հաշվարկում կներառվեն հիմնական կապիտալի հաշվեկշռային մեծության առավելագույնը 20 տոկոսի չափով,
     բ/ հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունը հաշվարկելիս լրացուցիչ կապիտալն ընդհանուր կապիտալի հաշվարկում կընդգրկվի 2016 թվականի հունվարի 1-ից մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ՝ առավելագույնը հիմնական կապիտալի 40 տոկոսի չափով, 2017 թվականի հունվարի 1-ից մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ՝ առավելագույնը հիմնական կապիտալի 30 տոկոսի չափով, իսկ 2018 թվականի հունվարի 1-ից՝ առավելագույնը հիմնական կապիտալի 20 տոկոսի չափով,
   - հիմնական կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև սահմանային հարաբերակցությունը (Ն11 նորմատիվ) 2018 թվականի հունվարի 1-ից կկազմի 10 տոկոս,
   - հիմնական տնտեսական նորմատիվների հաշվարկում կապիտալից ոչ նյութական ակտիվները (բանկի գործունեության ընթացքում օգտագործվող համակարգչային ծրագրեր և դրանց օգտագործման իրավունքներ, Վիզա, Մաստեր Քարդ, Ամերիքան էքսպրես, Սվիֆտ, ՍիԲիէյՆեթ, ԱրՔա համակարգերից օգտվելու իրավունք տվող վճարումներ) աստիճանաբար կնվազեցվեն,
   - կապիտալի հաշվարկում երկարաժամկետ ստորադաս փոխառությունների նվազագույն պահանջները խստացվել են. գործող ստորադաս փոխառությունները աստիճանական կնվազեցվեն ընդհանուր կապիտալի հաշվարկից:

   Ակնկալվում է, որ նախատեսվող փոփոխությունների արդյունքում կբարձրանա ՀՀ տարածքում գործող բանկերի՝ կապիտալի միջոցով ռիսկերի կլանման ունակությունը՝ նպաստելով ՀՀ բանկային համակարգի ֆինանսական կայունության ամրապնդմանը:

2. Փոփոխություններ և լրացումներ են կատարվել «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ում: Մասնավորապես՝
   - համապատասխան հաշվետվություններում նախատեսվել են դաշտեր, որտեղ պետք է արտացոլվեն մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափի (Ն31), խոշոր փոխառուների գծով ռիսկի առավելագույն չափի (Ն32), բանկի հետ կապված մեկ անձի գծով ռիսկի առավելագույն չափի (Ն41) և բանկի հետ կապված բոլոր անձանց գծով ռիսկի առավելագույն չափի (Ն42) նորմատիվների այն խախտումները, որոնք տեղի են ունեցել պահանջի իրավունքի ծագման պահին, սակայն շտկվել են հաշվետվությունների ներկայացման օրվա դրությամբ,
   - արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունների վերաբերյալ հաշվետվությունում վերլուծությունների առավել արդյունավետության նպատակով ավելացվել է գործառնությունների դասակարգումն ըստ արդյունաբերական ճյուղերի:

   Ակնկալվում է, որ նախատեսվող փոփոխությունների արդյունքում կմեծանա հաշվետվությունների ճշգրտությունը, և կապահովվի վերլուծությունների ավելի լայն հնարավորություն:

Վճարահաշվարկային համակարգի կարգավորման դաշտում

1. 2014 թ. ապրիլի 29-ին ՀՀ ԿԲ խորհուրդը ընդունել է «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առևտրային բանկերի՝ առանց բանկային հաշվի բացման դրամական փոխանցումների իրականացման արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում մասնակցության մասին» թիվ 105-Ն որոշումը, որով սահմանվել է, որ Հայաստանի Հանրապետության տարածքում գործունեություն իրականացնող այն առևտրային բանկերը, որոնք մասնակցում են իրենց հետ փոխկապակցված Արագ փոխանցումների մեկ համակարգին կամ փոխկապակցված են այդպիսի Արագ փոխանցման համակարգի օպերատորի հետ, ապահովում են առնվազն երկու այլ Արագ փոխանցումների համակարգերում մասնակցությունը:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	31.12.2012	31.03.2013	30.06.2013	30.09.2013	31.12.2013	31.03.2014	30.06.2014
Բանկերի քանակը[1]	22	22	22	22	22	22	22
Բանկերի քանակն ըստ կազմակերպաիրավական ձևի	22	22	22	22	22	22	22
ԲԲԸ	4	4	4	4	4	4	4
ՓԲԸ	17	17	17	17	17	17	17
ՍՊԸ	1	1	1	1	1	1	1
Կոոպերատիվ	0	0	0	0	0	0	0
Օտարերկրյա փայատերերի մասնակցությամբ	20	20	20	20	20	20	19
այդ թվում՝ 50%-ից ավելի	15	15	15	15	15	15	14
այդ թվում՝ 95%-ից ավելի	12	12	12	12	12	12	12
Բանկերի կանոնադրական հիմնադրամներում օտարերկրյա մասնակիցների բաժինը (տոկոսներով)	73.4	73.4	73.2	74.3	74.6	75.4	67.2
Վարկային կազմակերպությունների քանակը	32	33	33	33	33	33	33
Օտարերկրյա փայատերերի մասնակցությամբ	13	13	13	13	13	13	15
այդ թվում՝ 50%-ից ավելի	8	8	8	8	8	8	8
այդ թվում՝ 95%-ից ավելի	5	5	5	5	5	5	6
Վարկային կազմակերպությունների կանոնադրական հիմնադրամներում օտարերկրյա մասնակիցների բաժինը (տոկոսներով)	33.2	30.5	28.8	30.4	30.1	27.1	24.3
Ապահովագրական ընկերությունների քանակը	7	7	7	7	7	8	8
այդ թվում՝ կյանքի ապահովագրության լիցենզիա ունեցող	0	0	0	0	0	0	0
այդ թվում՝ ոչ կյանքի ապահովագրության լիցենզիա ունեցող	7	7	7	7	7	8	8
Օտարերկրյա փայատերերի մասնակցությամբ	4	4	4	4	4	4	3
այդ թվում՝ 50%-ից ավելի	3	3	3	3	3	3	3
այդ թվում՝ 95%-ից ավելի	3	3	3	3	3	3	1
Ապահովագրական բրոքերներ	3	3	2	2	2	2	2
Արժեթղթերի շուկայում ներդրումային ծառայություն մատուցող անձինք	30	30	30	29	29	30	29
այդ թվում՝ ներդրումային ծառայություն մատուցող անձ/բանկ/	21	21	21	21	21	21	21
այդ թվում՝ ներդրումային ծառայություն մատուցող ընկերություն	9	9	9	8	8	9	8
Հաշվետու թողարկող հանդիսացող ընկերությունների քանակը	14	14	15	15	15	15	16
Գրավատների քանակը	143	146	148	148	148	149	140
Փոխանակման կետերի քանակը [2]	238	244	239	238	236	225	227
Արժութային դիլերների քանակը	0	0	0	0	0	0	0
Դրամական փոխանցումներ իրականացնող կազմակերպություններ	7	7	8	8	8	7	7
Ակտիվների կառավարիչներ					3	3	4
Ֆոնդեր, այդ թվում՝					10	10	10
կենսաթոշակային ֆոնդեր					8	8	8
ներդրումային ֆոնդեր					1	1	2
վենչուրային ֆոնդեր					1	1	1

[1] ՀՀ բանկային համակարգում 2011 թվականի հունիսից գործում է 22 բանկ, սակայն դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ցուցանիշներում ներառված են 21 բանկի տվյալները:
[2] Ներկայացված են գործող փոխանակման կետերը:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	2013 թ. II եռամսյակ	2013 թ. III եռամսյակ	2013 թ. IV եռամսյակ	2014 թ. I եռամսյակ	2014 թ. II եռամսյակ
Միջին եռամսյակային ակտիվներ[1]	2577843	2658387	2792562	2862824	2899727
Միջին եռամսյակային վարկեր	1603713	1625900	1665708	1715757	1773691
Միջին եռամսյակային պարտավորություններ	2174152	2234384	2348796	2404436	2438335
Միջին եռամսյակային ավանդներ	1279005	1333229	1423788	1495253	1524602
Միջին եռամսյակային կապիտալ	403691	424003	443766	458388	461392
Առևտրային բանկերի միջին եռամսյակային ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվային ցուցանիշ	16.3%	16.4%	16.7%	16.4%	16.3%
Առևտրային բանկերի միջին եռամսյակային ընդհանուր իրացվելիության նորմատիվային ցուցանիշ	26.0%	26.7%	28.0%	29.9%	27.7%
Առևտրային բանկերի միջին եռամսյակային ընթացիկ իրացվելիության նորմատիվային ցուցանիշ	128.9%	129.5%	141.9%	147.4%	137.3%

[1] Միջին եռամսյակային ցուցանիշները հաշվարկվում են եռամսյակի երեք ամիսների մեծությունների միջինացմամբ:

ՀՀ ԲԱՆԿԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ [1]

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	30.06.2013	30.09.2013	31.12.2013	31.03.2014	30.06.2014	Փոփոխություն 30.06.14 – 31.03.14
Հաշվեկշռային կապիտալ	**413189**	**428733**	**456033**	**466038**	**473138**	**7100**
Կանոնադրական հիմնադրամ	**251627**	**258232**	**263030**	**270030**	**282843**	**12813**
Շահույթ / վնաս[2], *այդ թվում՝*	**118048**	**127324**	**136138**	**142595**	**133147**	**-9448**
Հաշվետու ժամանակաշրջանի շահույթ (վնաս)	12145	24356	37841	7684	18509	10826
Տոկոսային եկամուտներ	123720	188632	254956	66113	135115	69002
Տոկոսային ծախսեր	65459	99883	135120	35497	72109	36612
Ոչ տոկոսային եկամուտներ	30033	46778	67385	18206	37073	18867
Ոչ տոկոսային ծախսեր	51166	77064	106727	27141	55942	28801
Այլ ծախսեր[3]	24984	34107	42314	13998	25813	11815
Ընդհանուր պարտավորություններ, *այդ թվում՝*	**2227542**	**2289427**	**2487702**	**2460130**	**2449939**	**-10191**
Բանկերի թղթակցային հաշիվներ	7581	10878	10404	6042	8898	2856
Այլ պարտավորություններ բանկերի նկատմամբ (ներառյալ՝ ԿԲ)	407244	427974	416084	367564	375455	7890
Պարտավորություններ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	299581	308852	339448	335996	340647	4651
Ցպահանջ պարտավորություններ իրավաբանական և ֆիզիկական անձանց նկատմամբ	482256	442451	522137	519780	507724	-12056
Ժամկետային ավանդներ իրավաբանական և ֆիզիկական անձանց նկատմամբ	856208	921242	999118	1038466	1029810	-8656
Ընդհանուր ակտիվներ, *այդ թվում՝*	**2640731**	**2718160**	**2943734**	**2926168**	**2923078**	**-3090**
Կանխիկ դրամական միջոցներ	94309	98317	110005	105076	104236	-840
Թղթակցային հաշիվներ բանկերում (ներառյալ՝ ԿԲ)	401681	440260	549465	495461	416395	-79066
Այլ պահանջներ բանկերի նկատմամբ (ներառյալ՝ ԿԲ)	111115	96436	81190	79766	91476	11710
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	42252	39639	41372	43823	45751	1928
Պետական արժեթղթեր, այդ թվում՝	186919	201323	225674	221974	223794	1820
Այլ արժեթղթեր	6618	14864	17062	20730	22576	1846
Վարկեր իրավաբանական և ֆիզիկական անձանց	1610012	1632067	1708881	1738126	1786286	48160
Վարկային ներդրումներ, *այդ թվում՝*	**1719523**	**1742254**	**1792397**	**1839584**	**1886127**	**46543**
1. Ստանդարտ	1618383	1647564	1712712	1731095	1772887	41792
2. Հսկվող	63287	46357	41364	66420	58377	-8043
3. Ոչ ստանդարտ	22681	34956	19534	27631	36611	8979
4. Կասկածելի	15173	13378	18787	14439	18253	3814

[1] Հաշվարկներում ընդգրկված են 22 բանկի ցուցանիշներ:

[2] Ներառված է նախորդ և ընթացիկ ժամանակաշրջանի շահույթի (վնասի) գումարը:

[3] Տվյալներում ընդգրկված են ակտիվների զուտ մասհանումները և շահութահարկը:

ՀՀ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	30.06.2013	30.09.2013	31.12.2013	31.03.2014	30.06.2014	Փոփոխություն 30.06.14 – 31.03.14
Հաշվեկշռային կապիտալ	**72455**	**73809**	**77598**	**86260**	**96364**	**10104**
Կանոնադրական հիմնադրամ	**57978**	**58649**	**60783**	**68329**	**77835**	**9506**
Շահույթ / վնաս[1], *այդ թվում՝*	**12317**	**12976**	**14166**	**15437**	**15677**	**240**
Հաշվետու ժամանակաշրջանի շահույթ (վնաս)	3196	4398	5747	1469	3878	2409
Տոկոսային եկամուտներ	12092	18819	25554	7332	15583	8251
Տոկոսային ծախսեր	4550	7137	9873	2901	6093	3191
Ոչ տոկոսային եկամուտներ	3451	5079	7176	1817	3589	1772
Ոչ տոկոսային ծախսեր	6173	9523	13385	3675	7147	3472
Զուտ մասհանումներ	1064	1960	2183	814	1368	554
Այլ ծախսեր[2]	560	880	1543	290	740	451
Ընդհանուր պարտավորություններ, *այդ թվում՝*	**117135**	**122596**	**132243**	**139812**	**147647**	**7835**
Բանկերից ներգրաված միջոցներ	41918	42416	40399	45061	44381	-680
Այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրաված միջոցներ	30082	31487	37994	38268	41131	2862
Ցպահանջ պարտավորություններ ֆիզիկական և իրավաբանական անձանց նկատմամբ	781	827	877	553	552	-2
Ժամկետային պարտավորություններ ֆիզիկական և իրավաբանական անձանց նկատմամբ	25312	26438	28046	30676	33077	2401
Ընդհանուր ակտիվներ, *այդ թվում՝*	**189590**	**196405**	**209842**	**226072**	**242191**	**16119**
Կանխիկ դրամական միջոցներ	631	855	830	977	1195	218
Բանկային հաշիվներ	6649	7676	7059	5561	7200	1638
Այլ պահանջներ բանկերի նկատմամբ	43510	46827	53183	55381	63764	8383
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	4600	5083	5541	6127	6018	-109
Վարկեր	117780	119552	126997	136961	139128	2167
Ֆինանսական վարձակալություն	9238	8905	8678	8769	8703	-65
Պետական արժեթղթեր	3396	3126	3506	3310	3818	508
Այլ արժեթղթեր	136	127	124	5006	6465	1459
Վարկային ներդրումներ, *այդ թվում՝*	**167165**	**172850**	**187063**	**199861**	**207409**	**7549**
Ստանդարտ	159901	165613	179641	190295	198144	7850
Հսկվող	4336	3806	4467	5113	5712	599
Ոչ ստանդարտ	1384	2011	1547	2839	1903	-936
Կասկածելի	1544	1420	1408	1615	1650	36

[1] Ներառված է նախորդ և ընթացիկ ժամանակաշրջանի շահույթի (վնասի) գումարը:
[2] Տվյալներում ընդգրկված են ակտիվների զուտ մասհանումները և շահութահարկը:

ՀՀ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	30.06.2013	30.09.2013	31.12.2013	31.03.2014	30.06.2014	Փոփոխություն (30.06.2014) - (31.03.2014)
Դրամական միջոցներ	56	57	215	60	62	2
Բանկային հաշիվներ	889	771	967	811	1465	655
Ուղղակի ապահովագրության գծով ստացվելիք գումարներ	11728	9583	7504	6197	5283	-914
Համաապահովագրողներից ստացվելիք ապահովագրավճարներ	0	0	0	0	0	0
Վերաապահովագրողներից ստացվելիք գումարներ	128	90	115	125	75	-50
Հատուցումների գծով պահանջներ	549	679	516	576	543	-33
Սուբրոգացիայի հետևանքով առաջացած պահանջներ	440	474	538	656	764	108
Ավանդներ բանկերում	14887	13711	15326	14654	14683	29
Տրամադրված փոխառություններ	1196	1391	1672	2102	1658	-444
Ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթեր	4942	5386	5657	4068	5290	1223
Արժեթղթեր	1337	1646	4009	4900	3626	-1274
Հնարավոր կորուստների անհավաքագրելիության պահուստներ	-723	-690	-572	-671	-662	9
Վերաապահովագրողի բաժինը ապահովագրական պահուստներում	2326	2364	2662	2075	2246	171
Հաշվարկված ստացվելիք տոկոսներ	613	568	639	589	558	-31
Ապագա ժամանակաշրջանի ծախսեր և ապահովագրության գծով կանխավճարներ	3579	2854	2821	2970	2216	-754
Հիմնական միջոցներ	3094	2912	2951	2903	2827	-76
Այլ ակտիվներ	5208	5056	4989	5484	5559	75
Ընդամենը ակտիվներ	**50250**	**46851**	**50007**	**47497**	**46194**	**-1303**
Դրամ	44727	41300	44733	43620	42550	-1070
Արտարժույթ	5524	5551	5273	3877	3644	-233
Վճարվելիք հատուցումներ	273	354	232	299	257	-42
Վճարվելիք գումարներ միջնորդներին	937	768	780	545	374	-171
Հետ վերադարձվող ապահովագրավճարներ	87	90	109	165	135	-30
Համաապահովագրողներին, վերաապահովագրողներին փոխանցվելիք ապահովագրավճարներ	1126	1184	1625	1180	935	-245
Փոխառություններ և վարկեր	3634	3371	4708	3447	2985	-462
Տեխնիկական պահուստներ, այդ թվում՝	22287	19151	17219	18061	16121	-1940
ՉԱՊ	16726	13716	12196	13845	11674	-2171
Պահանջների պահուստներ	4383	4406	4467	3659	3853	194
Մաթեմատիկական պահուստ	0	0	0	0	0	37
Այլ պահուստներ	1179	1030	557	557	594	1168
Ռեպո համաձայնագրեր	4976	5587	5612	4055	5222	513
Այլ պարտավորություններ	0	2560	3753	2685	3198	-1211
Ընդամենը պարտավորություններ	**35916**	**33066**	**34038**	**30437**	**29227**	**-1211**
Դրամ	33399	30467	31141	28567	26998	-1569
Արտարժույթ	2517	2599	2897	1870	2228	358
Կանոնադրական կապիտալ	13232	13232	14732	14732	14732	0
Ընթացիկ ժամանակաշրջանի չբաշխված շահույթ/վնաս	-278	-648	-894	1263	1701	439
Նախորդ ժամանակաշրջանի չբաշխված շահույթ/վնաս	683	683	846	-132	-593	-460
Այլ	698	518	1284	1197	1126	-70
Ընդամենը սեփական կապիտալ	**14335**	**13785**	**15968**	**17060**	**16967**	**-92**
Ապահովագրական գումարներ	8275608	8677460	8160516	9713011	9611421	-101590
Ապահովագրավճարների համախառն մեծությունը	22708	28374	35753	10342	15711	5369
Վերաապահովագրողին փոխանցված ապահովագրավճարներ	1318	2001	3251	651	1434	782
Ապահովագրական հատուցումների համախառն մեծությունը	9656	14599	19719	5607	14217	8610
Վերաապահովագրողի բաժինն ապահովագրական հատուցումներում	372	637	820	820	6014	5194

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	30.06.2013	30.09.2013	31.12.2013	31.03.2014	30.06.2014	Փոփոխություն (30.06.2014) - (31.03.2014)
Հաշվեկշռային ընդհանուր կապիտալ	**4167.0**	**4324.2**	**5168.2**	**5431.1**	**5150.1**	**-281.1**
Չբաշխված շահույթ (վնաս), այդ թվում՝	644	709	1021	1328	1084	-244
Ընթացիկ ժամանակաշրջանի շահույթ	309	529	550	443	734	291
Միջնորդավճարներ և եկամուտներ ՆԾ մատուցումից	749	824	871	54	223	169
Արժեթղթերի վաճառքից ստացված զուտ եկամուտներ	392	1074	1219	246	294	48
Կանոնադրական կապիտալ	2942	2170	2954	3034	2971	-63
Ընդհանուր պարտավորություններ	**23323.8**	**23094.7**	**21870.7**	**23907.8**	**23658.0**	**-249.8**
Ռեզիդենտ բանկերից ներգրավված վարկեր	1860	527	314	1374	1855	481
Պարտավորություններ ռեպո համաձայնագրերի գծով	20938	22054	21001	21888	21291	-597
Հաշվեկշռային ընդհանուր ակտիվներ	**27490.7**	**27419.0**	**27039.0**	**29339.0**	**28808.1**	**-530.9**
Կանխիկ դրամական միջոցներ	2	2	6	5	2	-3
Բանկային հաշիվներ	477	548	475	417	423	6
Ռեպո համաձայնագրերով վաճառված արժեթղթեր	21235	22079	20306	21454	20621	-832
Ռեպո համաձայնագրերով ձեռք բերված արժեթղթեր	0	0	0	0	0	0
Պետական արժեթղթեր	3000	1723	2894	3392	3329	-63
Այլ արժեթղթեր	816	727	1242	1210	1057	-153

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԿՆՔՎԱԾ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԸ

(մլն ՀՀ դրամ)

	30.06.2013	30.09.2013	31.12.2013	31.03.2014	30.06.2014
ՆԲ կողմից կնքված գործարքներ	**1344317**	**1368551**	**862097**	**1192319**	**1132536**
բաժնային արժեթղթեր	5765	6030	1721	5103	10295
այդ թվում՝ բորսայական	193	116	32	0	55
կորպորատիվ պարտատոմսեր	99994	46722	51799	64072	21203
այդ թվում՝ բորսայական	1523	847	577	4788	3154
պետական պարտատոմսեր	105080	72232	92102	73273	82549
այդ թվում՝ բորսայական	3320	3691	1838	19704	15050
ռեպո/հակադարձ ռեպո գործարքներ[1]	1133478	1243567	716475	1049872	1018489
այդ թվում՝ բորսայական	727	200	185	61	263
ՆԸ կողմից կնքված գործարքներ	**82376**	**95874**	**54457**	**100921**	**165496**
բաժնային արժեթղթեր	1056	3	319	2994	53576
այդ թվում՝ բորսայական	1055	0	38	2961	53569
կորպորատիվ պարտատոմսեր	300	454	228	172	1251
այդ թվում՝ բորսայական	217	378	228	172	1119
պետական պարտատոմսեր	3057	7713	6520	7769	5392
այդ թվում՝ բորսայական	206	597	0	491	510
ռեպո/հակադարձ ռեպո գործարքներ[1]	77963	87703	47390	89986	105277
այդ թվում՝ բորսայական	0	0	185	61	263

[1] Ռեպո/հակադարձ ռեպո գործարքները չեն ներառում երկարաձգումները:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

(2014 թ. հունիսի 30-ի դրությամբ)

(հազար ՀՀ դրամ)

	30.06.2014	*31.03.2014*	*2013*
Ակտիվներ			
Ակտիվներ արտարժույթով			
Կանխիկ դրամ	4,966,432	5,046,458	5,570,029
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ	171,591,961	236,961,858	297,991,441
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ	445,059,324	468,267,458	490,723,065
Ածանցյալ ֆինանսական գործիքներ	14,513	16,401	28,096
Վաճառքի համար մատչելի ակտիվներ	1,646	1,646	1,646
Մինչև մարման ժամկետը պահվող ակտիվներ	104,675,174	103,806,074	118,299,299
ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ	58,130,199	59,010,354	58,242,991
Այլ ակտիվներ	329,732	250,699	124,864
	784,768,981	**873,360,948**	**970,981,431**
Ակտիվներ տեղական արժույթով			
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ	145,904,008	142,923,520	200,376,425
Վաճառքի համար մատչելի ակտիվներ	174,502,762	165,638,959	158,581,328
Ոչ ընթացիկ ակտիվներ վաճառքի համար	3,508,478	4,876,013	4,876,013
Հիմնական միջոցներ	69,197,892	69,206,263	69,908,317
Ոչ նյութական ակտիվներ	1,042,191	1,087,217	1,116,123
Այլ ակտիվներ	10,080,530	9,224,956	8,921,966
	404,235,861	**392,956,928**	**443,780,172**
Ընդամենը ակտիվներ	**1,189,004,842**	**1,266,317,876**	**1,414,761,603**
Պարտավորություններ			
Պարտավորություններ արտարժույթով			
Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ	142,691,535	211,459,693	240,775,372
Պարտավորություններ ՀՀ Կառավարության հանդեպ	2,663,666	2,947,228	5,550,796
Ածանցյալ ֆինանսական գործիքներ	21,061	53,005	3,112
Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ	244,858,938	256,118,246	260,542,511
Այլ փոխառություններ	63,210,022	62,889,389	58,357,035
Այլ պարտավորություններ	218,721	189,658	195,127
	453,663,943	**533,657,219**	**565,423,953**
Պարտավորություններ տեղական արժույթով			
Թղթադրամներ և մետաղադրամներ շրջանառության մեջ	403,274,836	382,530,619	446,833,170
Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ	175,572,548	186,730,756	226,233,984
Պարտավորություններ ՀՀ Կառավարության հանդեպ	166,884,542	168,537,997	185,846,835
Այլ պարտավորություններ	1,990,496	1,717,427	1,764,757
	747,722,422	**739,516,799**	**860,678,746**
Ընդամենը պարտավորություններ	**1,201,386,365**	**1,273,174,018**	**1,426,102,699**
Սեփական կապիտալ			
Թողարկված կապիտալ	100,000	100,000	100,000
Գլխավոր պահուստ	17,389,049	17,389,049	17,389,049
Լրացուցիչ կապիտալ	128,185,512	128,185,512	128,185,512
Վաճառքի համար մատչելի ակտիվների վերագնահատման պահուստ	836,297	732,974	997,024
Կուտակված վնաս	(158,892,381)	(153,263,677)	(158,012,681)
Ընդամենը սեփական կապիտալ	**(12,381,523)**	**(6,856,142)**	**(11,341,096)**
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ	**1,189,004,842**	**1,266,317,876**	**1,414,761,603**

ՀՀ ԿԲ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը հաստատվել է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից 2014 թվականի օգոստոսի 11-ին և ստորագրվել:

ԱՐԹՈՒՐ ՋԱՎԱԴՅԱՆ

Նախագահ

ՀԱՅԿԱՆՈՒՇ ՀԱԿՈԲՅԱՆ

Գլխավոր հաշվապահ

Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների վիճակը և կազմը

ՀՀ կենտրոնական բանկը, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 52-րդ հոդվածի դրույթներով, ներկայացնում է

ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների վիճակի և կազմի մասին

2014 թ. 2-րդ եռամսյակ (ներառյալ՝ եզրափակիչ շրջանառությունը)

Եռամսյակի սկիզբ	**ՀՓԻ**		**ԱՄՆ դոլար**
I. Համախառն արտաքին ակտիվներ			1,970,266,389.98
այդ թվում՝			
միջազգային պահուստներ (համախառն արտաքին ակտիվներ ազատ փոխարկելի արժույթով)			1,970,266,051.51
որից՝			
ՀՓԻ ԱՄՀ-ում	373,455.00		577,222.69
II. Զուտ արտաքին ակտիվներ			1,340,269,922.66
որից՝ ազատ փոխարկելի արժույթով			1,340,269,584.19
Եռամսյակի վերջ			
I. Համախառն արտաքին ակտիվներ			1,784,005,019.16
այդ թվում՝			
միջազգային պահուստներ (համախառն արտաքին ակտիվներ ազատ փոխարկելի արժույթով)			1,784,004,686.76
որից՝			
ՀՓԻ ԱՄՀ-ում	327,221.00		505,848.11
II. Զուտ արտաքին ակտիվներ			1,168,942,658.62
որից՝ ազատ փոխարկելի արժույթով			1,168,942,326.22

ՀՀ ԿԲ նախագահ

ԱՐԹՈՒՐ ՋԱՎԱԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԴԻՐՔԸ 2013 ԹՎԱԿԱՆԻՆ [6, 7]

Վիճակագրության վարչություն

Վճարային հաշվեկշիռն ու միջազգային ներդրումային դիրքը տվյալ երկրի և արտաքին աշխարհի միջև իրականացված տնտեսական բոլոր գործառնությունների վիճակագրական արտացոլումն են: Եթե վճարային հաշվեկշիռն արտացոլում է ժամանակի որոշակի միավորի ընթացքում՝ սովորաբար 1 տարում իրականացված գործառնությունները, ապա միջազգային ներդրումային դիրքն արտացոլում է նախկինում իրականացված բոլոր տնտեսական գործառնությունների արդյունքում արտաքին աշխարհի նկատմամբ ձևավորված երկրի ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները ժամանակի որոշակի պահի դրությամբ, ներառյալ այն փոփոխությունները, որոնք իրականացվել են գների, փոխարժեքի կամ այլ ճշտումների հաշվին:

Հայաստանի վճարային հաշվեկշիռը կազմվում է 1993 թվականից, իսկ միջազգային ներդրումային դիրքը՝ 1998 թվականից: Մինչև 2011 թվականը այդ աշխատանքները իրականացնում էր ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը, իսկ սկսած 2011 թվականից Հայաստանի արտաքին հաշիվների վիճակագրությունը կազմում է ՀՀ կենտրոնական բանկը: Հարկ է նշել, որ 2011 թ. սկսած՝ արտաքին հաշիվների վիճակագրությունը վարվում է «Վճարային հաշվեկշռի և միջազգային ներդրումային դիրքի ձեռնարկի» (6-րդ հրատարակություն, 2008 թ.) մեթոդաբանությանը համապատասխան, և Հայաստանում վճարային հաշվեկշռի և միջազգային ներդրումային դիրքի վիճակագրությունը կազմվում է միջազգային չափանիշներին համապատասխան, թեև շարունակական բարելավման կարիք ունի:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

2013 թվականին ՀՀ վճարային հաշվեկշիռը հիմնականում պահպանել է նախորդ տարիների միտումները՝ միևնույն ժամանակ դրսևորելով որոշակի առանձնահատկություններ: Այսպես՝ նախորդ տարիների համեմատ պահպանվել են ապրանքների թե՛ արտահանման և թե՛ ներմուծման աճի տեմպերը՝ համապատասխանաբար կազմելով 7.9% և 2.8% (նախորդ տարի՝ 5.9% և 2.4%): Ինչպես նախորդ տարի, այնպես էլ 2013 թվականին աճ է արձանագրվել զուտ սկզբնական եկամուտներում՝ 27.8% և երկրորդային եկամուտներում՝ 12.6%: Հարկ է նշել, որ երկրորդային եկամուտների աճ գրանցվել է ինչպես պետական կառավարման համակարգում (12.1%), այնպես էլ մասնավոր (Ֆինանսական կազմակերպություններ, ոչ

** Հեղինակների տեսակետները կարող են չհամընկնել ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական դիրքորոշմանը:*

[6] Նյութը յուրաքանչյուր տարի հրապարակվում է «ՀՀ կենտրոնական բանկի բանբեր» եռամսյա պարբերականում (սկսած՝ 2000 թվականից, հիմնականում՝ 2-րդ եռամսյակի թողարկման մեջ):

[7] Վճարային հաշվեկշռի, միջազգային ներդրումային դիրքի և արտաքին պարտքի վերաբերյալ տվյալների աղբյուրը ՀՀ կենտրոնական բանկն է, իսկ արտաքին առևտրի տվյալների աղբյուրը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը:

ֆինանսական կազմակերպություններ, տնային տնտեսություններ և ՏՏՍՈԱԿ) հատվածում (12.6%): 2013 թվականին պահպանվել է ընթացիկ հաշվի բացասական մնացորդի՝ նախորդ տարիներին արձանագրված նվազման միտումը, ինչը բացարձակ առումով կազմել է 264.6 մլն ԱՄՆ դոլար (այսուհետև՝ դոլար): Արդյունքում ընթացիկ հաշիվ/ՀՆԱ հարաբերակցությունը կազմել է 8.0%՝ նախորդ տարվա 11.1%-ի փոխարեն: Ընթացիկ հաշվի 264.6 մլն դոլարով նվազումը տեղի է ունեցել ի հաշիվ սկզբնական եկամուտների ու երկրորդային եկամուտների դրական մնացորդի ավելացման (համապատասխանաբար՝ 117.5 մլն դոլար և 92.0 մլն դոլար), ինչպես նաև ապրանքների ու ծառայությունների բացասական մնացորդի կրճատման (55 մլն դոլար): Չնայած 2013 թ. «Ապրանքներ» հոդվածի բացասական հաշվեկշիռը նվազել է 0.9%-ով, այնուհանդերձ հոդվածը շարունակում է մնալ ընթացիկ հաշվի բացասական մնացորդը ձևավորող հիմնական հոդվածը: Տարվա ընթացքում աշխատողների վարձատրության ու ընդամենը երկրորդային եկամուտների զուտ ներհոսքի աճը կազմել է համապատասխանաբար՝ 14.9% և 12.6% (նախորդ տարի՝ համապատասխանաբար 6.9% աճ և 3.2% նվազում):

Աղյուսակ 1. ՀՀ վճարային հաշվեկշիռը 2009 - 2013 թվականներին (համառոտ ներկայացում)

մլն դոլար

Ցուցանիշներ	2009	2010	2011	2012	2013	Աճի տեմպը 2013 թ. 2012 թ. նկատ.,%	2013թ. բացարձ. փոփոխ. 2012թ. նկատմամբ
ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇԻՎ	**-1520.4**	**-1318.2**	**-1123.6**	**-1103.9**	**-839.2**	**76.0**	**264.6**
կրեդիտ	2992.4	3838.2	4531.3	4659.9	5110.5	109.7	450.7
դեբետ	4512.8	5156.4	5654.9	5763.7	5949.8	103.2	186.1
Ապրանքներ և ծառայություններ	-2461.2	-2383.2	-2240.3	-2259.5	-2204.4	97.6	55.1
կրեդիտ	1366.3	1975.6	2467.9	2554.4	2733.5	107.0	179.2
դեբետ	3827.5	4358.8	4708.2	4813.8	4937.9	102.6	124.1
Ապրանքներ	-2090.0	-2065.7	-2109.8	-2111.9	-2092.3	99.1	19.7
կրեդիտ	773.6	1197.5	1431.6	1515.7	1635.9	107.9	120.2
դեբետ	2863.6	3263.2	3541.4	3627.6	3728.1	102.8	100.5
Ապրանքների առևտուրն ըստ վճարային հաշվեկշռի հիմքի	-2084.6	-2034.2	-2098.8	-2115.4	-1997.2	94.4	118.3
կրեդիտ	740.8	1168.9	1364.2	1438.2	1562.3	108.6	124.1
դեբետ	2825.4	3203.1	3463.0	3553.6	3559.5	100.2	5.9
Ծառայություններ	-371.2	-317.5	-130.5	-147.6	-112.1	76.0	35.4
կրեդիտ	592.7	778.1	1036.3	1038.7	1097.7	105.7	59.0
դեբետ	963.9	1095.6	1166.8	1186.2	1209.8	102.0	23.6
Տրանսպորտ	-273.6	-291.0	-283.8	-299.3	-300.7	100.5	-1.4
կրեդիտ	106.9	154.6	176.7	173.8	171.6	98.7	-2.2
դեբետ	380.5	445.5	460.5	473.1	472.2	99.8	-0.9
Ճանապարհորդություն	-8.1	10.3	-29.3	-31.2	-44.5	142.3	-13.2
կրեդիտ	337.0	410.7	448.1	453.9	458.0	100.9	4.1
դեբետ	345.1	400.4	477.4	485.2	502.5	103.6	17.3
Այլ ծառայություններ	-89.5	-36.8	182.6	183.0	233.0	127.3	50.0
կրեդիտ	148.8	212.9	411.5	411.0	468.1	113.9	57.1
դեբետ	238.3	249.7	228.9	228.0	235.1	103.1	7.1
Սկզբնական եկամուտներ	358.8	458.3	360.1	423.1	540.6	127.8	117.5
կրեդիտ	875.8	1049.1	1065.6	1115.2	1259.1	112.9	143.8
դեբետ	517.0	590.8	705.5	692.2	718.5	103.8	26.4
Աշխատողների վարձատրություն	760.5	909.2	855.9	915.1	1051.0	114.9	136.0
կրեդիտ	837.6	1008.2	1008.6	1071.2	1228.3	114.7	157.1
դեբետ	77.1	99.0	152.7	156.1	177.3	113.5	21.1
Ներդրումային եկամուտներ	-401.7	-451.0	-495.9	-492.0	-510.5	103.8	-18.5
կրեդիտ	38.2	40.9	57.0	44.0	30.8	69.8	-13.3
դեբետ	439.9	491.9	552.8	536.0	541.2	101.0	5.2

Ցուցանիշներ	2009	2010	2011	2012	2013	Աճի տեմպը 2013 թ. 2012 թ. նկատ.,%	2013թ. բացարձ. փոփոխ. 2012թ. նկատմամբ
Երկրորդային եկամուտներ	582.0	606.8	756.7	732.6	824.6	112.6	92.0
կրեդիտ	750.3	813.5	997.9	990.3	1117.9	112.9	127.7
դեբետ	168.3	206.7	241.2	257.7	293.4	113.8	35.6
Պետական կառավարում	84.1	94.2	172.3	107.8	120.9	112.1	13.0
կրեդիտ	87.4	97.9	176.4	111.8	124.7	111.5	12.9
դեբետ	3.3	3.7	4.2	4.0	3.8	96.7	-0.1
Ֆինանսական կազմակերպություններ, ոչ ֆինանսական կազմակերպություններ, տնային տնտեսություններ և ՏՏՍՈԱԿ	497.9	512.6	584.5	624.7	703.7	112.6	79.0
կրեդիտ	663.0	715.6	821.5	878.5	993.2	113.1	114.8
դեբետ	165.0	203.0	237.1	253.8	289.5	114.1	35.8
ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱՇԻՎ	**87.9**	**98.9**	**94.6**	**107.7**	**76.1**	**70.6**	**-31.6**
կրեդիտ	103.0	111.0	113.6	128.5	94.8	73.7	-33.8
դեբետ	15.1	12.2	19.0	20.8	18.7	89.7	-2.1
Պետական կառավարում	31.2	44.3	56.9	31.8	10.6	33.2	-21.2
կրեդիտ	31.2	44.3	56.9	32.2	11.6	36.0	-20.6
դեբետ	0.0	0.0	0.0	0.4	1.0	2.5 անգամ	0.6
Ֆինանսական կազմակերպություններ, ոչ ֆինանսական կազմակերպություններ, տնային տնտեսություններ և ՏՏՍՈԱԿ	56.6	54.6	37.7	75.9	65.5	86.3	-10.4
կրեդիտ	71.8	66.8	56.7	96.3	83.2	86.3	-13.2
դեբետ	15.1	12.2	19.0	20.4	17.7	86.5	-2.8
Զուտ վարկավորում (+) զուտ փոխառություն (-) ընթացիկ և կապիտալ հաշիվներից	-1432.6	-1219.3	-1029.0	-996.2	-763.2	76.6	233.0
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇԻՎ	-1440.0	-1318.5	-1000.9	-750.6	-1030.2	137.3	-279.6
Զուտ վարկավորում (+) զուտ փոխառություն (-) ֆինանսական հաշվից	-1440.0	-1318.5	-1000.9	-750.6	-1030.2	137.3	-279.6
Ուղղակի ներդրումներ	-709.6	-521.4	-437.3	-473.0	-351.5	74.3	121.4
Պորտֆելային ներդրումներ	4.2	-18.3	8.4	-0.8	-689.1	825.8 անգամ	-688.3
Ֆինանսական ածանցյալներ	0.0	0.0	0.0	0.0	-0.6	-	-0.6
Այլ ներդրումներ	-1334.8	-650.0	-704.8	-228.5	-459.7	2.0 անգամ	-231.2
Պահուստային ակտիվներ	600.3	-128.8	132.9	-48.3	470.6	-	519.0
Զուտ սխալներ և բացթողումներ	-7.5	-99.2	28.0	245.6	-267.1	-	-512.6

Կապիտալի հաշվում, նախորդ տարվա համեմատ, նույնպես արձանագրվել են նվազման միտումներ. պետական տրանսֆերտները նվազել են 21.2 մլն դոլարով և կազմել են 10.6 մլն դոլար, իսկ մասնավոր կապիտալ տրանսֆերտները՝ 10.4 մլն դոլարով և կազմել 65.5 մլն դոլար: Ընթացիկ և կապիտալի հաշիվների գործառնությունների արդյունքում արտաքին աշխարհից ՀՀ տնտեսության զուտ փոխառությունը կազմել է 763.2 մլն դոլար, ինչը նախորդ տարվա համեմատ նվազել է 23.4%-ով կամ 233.0 մլն դոլարով:

Ֆինանսական հաշվում գրանցվել է օտարերկրյա ուղղակի ներդրումների 351.5 մլն դոլարի զուտ ներհոսք, որը նախորդ տարվա համեմատ նվազել է 25.7%-ով: Նշենք, որ 2013 թվականին արտերկրներում կատարված ուղղակի ներդրումներն ավելացել են՝ նախորդ տարվա 15.8 մլն դոլարի փոխարեն կազմելով 18.7 մլն դոլար: 2013 թվականին Հայաստանն առաջին անգամ թողարկեց եվրոպարտատոմսեր, ինչի արդյունքում արձանագրվեց պորտֆելային ներդրումների աննախադեպ աճ: Տարվա ընթացքում տնտեսության հատվածների կողմից այլ ներդրումների տեսքով ներգրավված միջոցները կազմել են 459.7 մլն դոլար, որը նախորդ տարվա համեմատ աճել է ավելի քան 2 անգամ, ինչը հիմնականում պայմանավորված է ավանդային կազմակերպությունների ներգրաված դրամական միջոցների ու ավանդների աճով (437.6 մլն դոլարի պարտավորությունների ստանձնում): Ավանդային կազմակերպությունների կողմից ոչ ռեզիդենտներին տրամադրված և ոչ ռեզիդենտներից ներգրավված վարկերը համապատասխանաբար կազմել են 18.8 և 123.5 մլն դոլար (նախորդ տարի՝ 47.3 մլն դոլար և 302.6 մլն դոլար): 2013 թվականին 470.6 մլն դոլարով աճել են ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պահուստները:

Ապրանքների արտահանում

Ապրանքների արտահանումը (կրեդիտ)[8] 2013 թվականին կազմել է 1635.9 մլն դոլար՝ նախորդ տարվա համեմատ ավելացել է՝ 7.9%-ով, իսկ ապրանքների արտահանումը, ըստ արտաքին առևտրի վիճակագրության, կազմել է 1478.7 մլն դոլար՝ նախորդ տարվա համեմատ ավելացել է 7.1%-ով: Առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի՝ արտահանումն ավելացել է 6.9%-ով՝ նախորդ տարվա 6.1%-ի փոխարեն:

Գծապատկեր 1. Ապրանքների արտահանումը (ըստ ապրանքների առևտրի վիճակագրության տվյալների) 2007-2013 թվականներին



«Պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբի արտահանման ծավալները նախորդ տարվա համեմատ ավելացել են 55.4 մլն դոլարով կամ 21.7%-ով, «Կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք» ապրանքախմբինը՝ 21.4 մլն դոլարով կամ 64.6%-ով, «Մանածագործական իրեր» ապրանքախմբինը՝ 20.0 մլն դոլարով կամ 2 անգամ:

Ի տարբերություն վերոնշյալ ապրանքախմբերի՝ հիմնականում նվազել է «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» (33.2 մլն դոլարով կամ 9.7%-ով) և «Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» ապրանքախմբերի արտահանումը (20.1 մլն դոլարով կամ 48.8%-ով) գծով:

Չնայած 2002 թվականից մետաղական արտադրանքի արտահանումն ունեցել է աճի միտում, սակայն վերջին 2 տարիներին որոշակիորեն նվազել է, ընդ որում, 2013 թ., բացառությամբ պղնձի, նվազել են գրեթե բոլոր մետաղական ապրանքների արտահանման ծավալները: Արդյունքում՝ մետաղական ապրանքների արտահանման տեսակարար կշիռը ընդհանուր արտահանման ծավալում վերջին տարիներին նվազել է. 2011 թ. 53.8%-ի փոխարեն 2013 թ. կազմել է 47.3%: 2013 թվականին մետաղները հիմնականում արտահանվել են Բուլղարիա (արտահանվում է հիմնականում պղնձի հանքաքար և խտանյութ), Գերմանիա (արտահանվում է երկաթամիահալվածք, պղինձ և մոլիբդեն), Բելգիա (արտահանվում է հիմնականում պղինձ), Նիդեռլանդներ (արտահանվում է հիմնականում երկաթամիահալվածք), Կանադա (արտահանվում է անմշակ ոսկի) և ԱՄՆ (արտահանվում է հիմնականում ալյումինե փայլաթիթեղ):

---

[8] Ապրանքների արտահանման կրեդիտ հոդվածը ներառում է ապրանքների արտահանումը ըստ արտաքին առևտրի վիճակագրության՝ ՖՕԲ գներով, որին ավելացվում են տրանսպորտային կայաններում ձեռք բերված ապրանքները և հանվում են պատվիրատուի հումքի հիման վրա վերամշակված ապրանքների արտահանումը/ներմուծումը (մշակման արժեքով ներառվում է ծառայությունների մեջ), ինչպես նաև միգրանտների տրանսֆերտները: Արտաքին առևտրի վիճակագրությունը ընդգրկում է մաքսային մարմինների կողմից հայտարարագրված ապրանքների առևտուրը՝ կատարված իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից:

Գծապատկեր 2. Արտահանման կառուցվածքն ըստ ապրանքախմբերի[9]



Աղյուսակ 2. Արտահանվող մետաղների հիմնական տեսակները

Մետաղը	2011		2012		2013	
	Արժեք (մլն ԱՄՆ դոլար)	Տես. կշիռը ընդհանուր արտահան-ման մեջ (%)	Արժեք (մլն ԱՄՆ դոլար)	Տես. կշիռը ընդհանուր արտահան-ման մեջ (%)	Արժեք (մլն ԱՄՆ դոլար)	Տես. կշիռը ընդհանուր արտահան-ման մեջ (%)
Պղինձ	380.7	28.5	338.3	24.5	375.0	25.4
որից՝ հանքաքար	260.6	19.5	227.6	16.5	279.9	18.9
Երկաթամիահալվածք	121.3	9.1	106.8	7.7	102.4	6.9
Ոսկի	79.5	6.0	91.4	6.6	95.9	6.5
Ալյումին	91.2	6.8	88.0	6.4	85.5	5.8
Մոլիբդեն	26.4	2.0	27.2	2.0	24.2	1.6
որից՝ հանքաքար	11.1	0.8	8.3	0.6	6.7	0.4
Ցինկի հանքաքար	13.9	1.0	17.7	1.3	16.9	1.1
Այլ	5.5	0.4	27.3	2.0	0.4	0.0
Ընդամենը	**718.5**	**53.8**	**696.7**	**50.5**	**700.2**	**47.3**

Ինչպես նախորդ տարիներին, արտահանվող ապրանքների ապրանքային բևեռացման ցուցանիշը[10] շարունակել է մնալ բարձր: Այսպես՝ 2013 թվականին 4 հիմնական ապրանքախմբեր՝ «Պատրաստի սննդի արտադրանք», «Հանքահումքային մթերք», «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր, «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր», կազմել են ամբողջ արտահանման 85%-ը: Այնուամենայնիվ, արտահանվող ապրանքների ապրանքային բևեռացման ցուցանիշը 2013 թվականին մի փոքր նվազել է՝ կազմելով 42.9%, ինչը պայմանավորված է արտահանման մեջ «Ոչ

[9] *Ապրանքների արտահանումը գրաֆիկում ներկայացված է ըստ ապրանքների արտաքին առևտրի վիճակագրության:*
[10] *Հաշվարկվում է հետևյալ բանաձևի օգնությամբ.*

$$K = \frac{\sqrt{\sum_{i=1}^{n} x_i^2}}{X} * 100, \text{ որտեղ՝}$$

K-ն բևեռացման գործակիցն է, x_1-ը՝ i ապրանքի արտահանման (ներմուծման) ծավալը, x-ը՝ Հայաստանի ամբողջ արտահանման (ներմուծման) ծավալը: Մեկ ապրանքի արտահանման (ներմուծման) դեպքում ցուցանիշը հավասար կլինի 100%-ի. որքան ապրանքախմբերի թվաքանակը մեծ է, այնքան բևեռացման ցուցանիշը փոքր է:

թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» և «Հանքահումքային մթերքներ» ապրանքախմբերի տեսակարար կշիռների նվազմամբ (2012 թ. համապատասխանաբար կազմել են 24.8% և 29.2%, 2013 թվականին՝ 20.9% և 27.5%):

Աղյուսակ 3. Արտահանման ապրանքային բևեռացումը (%)

Տարեթիվ	2008	2009	2010	2011	2012	2013
Ապրանքային բևեռացում	43.7	44.0	47.3	45.8	44.7	42.9

ԱՊՀ անդամ երկրներ արտահանվող ապրանքների ծավալներն ավելացել են 63.6 մլն դոլարով: Զգալիորեն աճել է ապրանքների արտահանումը Ռուսաստանի Դաշնություն՝ 55.0 մլն դոլարով (ոգելից խմիչք, ադամանդ և միրգ) և Թուրքմենստան՝ 5.2 մլն դոլարով (սիգարետ և սիգար, ոսկերչական իրեր): Ոչ ԱՊՀ երկրներ արտահանման ծավալներն աճել են 35.0 մլն դոլարով, ընդ որում՝ արտահանումը Եվրոմիության երկրներ նվազել է 18.3 մլն դոլարով: Որոշակիորեն աճել է ապրանքների արտահանումը Բուլղարիա՝ 22.9 մլն դոլարով (ադամանդ, չզտված պղինձ), Իտալիա՝ 15.5 մլն դոլարով (տրիկոտաժից իրեր), Չինաստան՝ 37.6 մլն դոլարով (պղնձի և թանկարժեք մետաղների հանքաքար), Իրաք՝ 32.7 մլն դոլարով (ծխախոտ, ոգելից խմիչքներ), Թայվան՝ 37.2 մլն դոլարով (պղնձի հանքաքար), Վրաստան՝ 14.3 մլն դոլարով (ոգելից խմիչքներ, ցեմենտ, ապակե շշեր): Միևնույն ժամանակ, նվազել են արտահանման ծավալները Շվեյցարիա՝ 46.9 մլն դոլարով (պղնձի և ցինկի հանքաքար և խտանյութ), Իսպանիա՝ 20.4 մլն դոլարով (պղնձի հանքաքար և խտանյութ), Գերմանիա՝ 18.8 մլն դոլարով (մոլիբդենի և պղնձի հանքաքար, երկաթամիահալվածք), Նիդեռլանդներ՝ 13.3 մլն դոլարով (երկաթամիահալվածք, մոլիբդենի հանքաքար և խտանյութ), Իրան՝ 13.6 մլն դոլարով (էլեկտրաէներգիա, կենդանի կենդանիներ):

Գծապատկեր 3. Արտահանման կառուցվածքն ըստ հիմնական երկրների (2013 թ.)



2013 թվականին, նախորդ տարվա համեմատ, 1 տոկոսային կետով աճել է արտահանման աշխարհագրական բևեռացման ցուցանիշը[11] և կազմել է 30.7%՝ նախորդ տարվա 29.7 %-ի փոխարեն:

[11] *Հաշվարկվում է հետևյալ բանաձևի օգնությամբ.*

$$K=\frac{\sqrt{\sum_{i=1}^{n} x_i^2}}{X} * 100$$ *որտեղ՝*

K-ն բևեռացման գործակիցն է,
X_i-ը՝ արտահանման (ներմուծման) ծավալն է i երկիր,
X –ը՝ Հայաստանի ամբողջ արտահանման (ներմուծման) ծավալը:

Աղյուսակ 4. Արտահանման աշխարհագրական բևեռացումը (%)

Տարեթիվ	2008	2009	2006	2011	2012	2013
Աշխարհագրական բևեռացում	32.7	29.6	30.7	29.6	29.7	30.7

Ապրանքների ներմուծում

2013 թվականին ապրանքների ներմուծումը (դեբետ)[12] կազմել է 3728.1 մլն դոլար՝ նախորդ տարվա համեմատ ավելանալով 2.8%-ով, իսկ ըստ արտաքին առևտրի վիճակագրության՝ 4385.9 մլն դոլար՝ նախորդ տարվա համեմատ ավելանալով 2.9%-ով: 2013 թվականին, նախորդ տարվա համեմատ, ավելացել են հիմնականում «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր»՝ 116.2 մլն դոլարով կամ 64.9%-ով, «Պատրաստի սննդի արտադրանք»՝ 40.0 մլն դոլարով կամ 11.2%-ով, «Քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերական ճյուղերի արտադրանք»՝ 33.3 մլն դոլարով կամ 10.2%-ով, «Սարքեր և ապարատներ»՝ 10.7 մլն դոլարով կամ 16.6%-ով, ապրանքախմբերի ներմուծման ծավալները: Միաժամանակ, նվազել են «Հանքահումքային մթերք»՝ 43.5 մլն դոլարով կամ 4.7%-ով, «Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ»՝ 20.8 մլն դոլարով կամ 3.5%-ով, «Բուսական ծագման արտադրանք»՝ 14.2 մլն դոլարով կամ 5.5%-ով, «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր»՝ 12.5 մլն դոլարով կամ 4.0%-ով, ապրանքախմբերի ներմուծման ծավալները:

Գծապատկեր 4. Ներմուծման կառուցվածքն ըստ ապրանքախմբերի



Ի տարբերություն արտահանման, ներմուծվող ապրանքախմբերի ցրվածությունն ավելի մեծ է: Այդ է վկայում նաև արտահանման նկատմամբ ներմուծման համեմատաբար ցածր բևեռացման ցուցանիշը, ինչը նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 0.9 տոկոսային կետով և կազմել 31.1%: Բևեռացման ցածր

[12] *Ապրանքների ներմուծման դեբետ հոդվածը ներառում է ապրանքների ներմուծումը ՖՕԲ գներով՝ ըստ արտաքին առևտրի վիճակագրության, որին ավելացվում են տրանսպորտային կայաններում ձեռք բերված ապրանքները և հանվում են պատվիրատուի հումքի հիման վրա վերամշակման նպատակով ներմուծված/արտահանված ապրանքները (մշակման արժեքով ներառվում է ծառայությունների մեջ), ինչպես նաև միգրանտների տրանսֆերտները: Ներմուծումը ՖՕԲ գներով, ըստ արտաքին առևտրի վիճակագրության, ընդգրկում է մաքսային մարմինների կողմից հայտարարագրված ապրանքների ներմուծումը՝ իրականացված իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից՝ առանց արտերկրից ապրանքները ՀՀ մաքսային սահման հասցնելու համար կատարված ծախսերի:*

ցուցանիշը պայմանավորված է այն հանգամանքով, որ տարիների ընթացքում ավելանում է Հայաստան ապրանքներ ներմուծող գործընկեր երկրների թիվը՝ նվազեցնելով երկրի կախվածությունն այս կամ այն երկրի անբարենպաստ տնտեսական միջավայրի հնարավոր ազդեցություններից:

Աղյուսակ 5. Ներմուծման ապրանքային բևեռացումը (%) [12]

Տարեթիվ	2008	2009	2010	2011	2012	2013
Ապրանքային բևեռացում	30.5	32.0	31.7	31.1	32.0	31.1

Գծապատկեր 5. Ներմուծման կառուցվածքն ըստ ապրանքի ծագման հիմնական երկրների (2013 թ.)



Ըստ ներմուծվող ապրանքների ծագման երկրի հատկանիշի՝ ԱՊՀ անդամ երկրներից ներմուծումը 2012 թվականի համեմատ նվազել է 34.6 մլն դոլարով: Հիմնականում նվազել են ներմուծման ծավալները Ռուսաստանի Դաշնությունից՝ 32.3 մլն դոլարով (հիմնականում ներմուծվել են բնական և հեղուկ գազ, ցորեն, նավթ ու նավթամթերք, չմշակված ալյումին), Թուրքմենստանից՝ 11.5 մլն դոլարով (հիմնականում ներմուծվել են նավթամթերք, սարքավորումներ), Ղազախստանից՝ 8.2 մլն դոլարով (հիմնականում ներմուծվել են ոչ թանկարժեք մետաղներ, պատրաստի սննդի արտադրանք): ԱՊՀ մնացած երկրներից ներմուծման ծավալներն ավելացել են հատկապես Ուկրաինայից՝ 11.0 մլն դոլարով և Բելառուսից՝ 7.3 մլն դոլարով: Ոչ ԱՊՀ երկրներից ներմուծումը ավելացել է 159.2 մլն դոլարով, ընդ որում՝ Եվրոմիության անդամ երկրներից աճի ծավալը կազմել է 32.0 մլն դոլար: Ավելացել են Շվեյցարիայից՝ 85.1 մլն դոլարով (հիմնականում ներմուծվել են ոսկի և ադամանդե քար), Հարավային Աֆրիկայից՝ 40.9 մլն դոլարով (հիմնականում ներմուծվել են անվադողեր, ծխախոտ), Ռումինիայից՝ 30.2 մլն դոլարով (հիմնականում ներմուծվել են նավթ, նավթամթերք, մրգահյութեր), ԱՄԷ-ից՝ 19.7 մլն դոլարով (հիմնականում ներմուծվել են մարդատար և բեռնատար ավտոմեքենաներ), Վրաստանից՝ 16.9 մլն դոլարով (հիմնականում ներմուծվել են պարարտանյութ, փայտից արտադրանք, ոչ ոգելից խմիչքներ), Ավստրիայից՝ 16.4 մլն դոլարով (հիմնականում ներմուծվել են ոսկի, սարքավորումներ), Գերմանիայից՝ 15.0 մլն դոլարով (հիմնականում ներմուծվել են դեղամիջոցներ, մարդատար և բեռնատար ավտոմեքենաներ, սիգարետ և սիգար): Միևնույն ժամանակ, նվազել է ներմուծումը Իրանից՝ 20.9 մլն դոլարով (հիմնականում ներմուծվել են բնական գազ, նավթ և նավթամթերք, պարարտանյութ), Բուլղարիայից՝ 18.2 մլն դոլարով (հիմնականում ներմուծվել են նավթ և նավթամթերք), Թուրքմենստանից՝ 11.5 մլն դոլարով (հիմնականում ներմուծվել են նավթամթերք, հեղուկ գազ) Չինաստանից՝ 13.8 մլն դոլարով (հիմնականում ներմուծվել են տրիկոտաժից իրեր, պլաստմասսայից իրեր, սարքավորումներ)[13]:

[13] *Նշված երկրներից ապրանքների ներմուծումը հաշվարկված է «ըստ ծագման երկրի» հատկանիշի կազմված տվյալների:*

2013 թվականին, «ըստ ապրանքի ծագման երկրի» հատկանիշի, ներմուծման աշխարհագրական բևեռացման ցուցանիշը նախորդ տարվա համեմատ մի փոքր նվազել է և կազմել 28.6%, իսկ համապատասխան ցուցանիշը, հաշվարկված առևտուր անող երկրի հատկանիշի տվյալների հիման վրա, աճել է և կազմել 27.4%:

Աղյուսակ 6. Ներմուծման աշխարհագրական բևեռացումն ըստ ապրանքի ծագման երկրի հատկանիշի (%)

Տարեթիվ	2008	2009	2010	2011	2012	2013
Աշխարհագրական բևեռացում	26.3	29.1	28.5	27.6	29.9	28.6

Աղյուսակ 7. Ներմուծման աշխարհագրական բևեռացումն ըստ առևտուր անող երկրի հատկանիշի (%)

Տարեթիվ	2008	2009	2010	2011	2012	2013
Աշխարհագրական բևեռացում	24.7	24.4	24.8	24.8	25.7	27.4

Հայաստանում ներմուծման միջին հակվածության ցուցանիշը՝ ներմուծում/ՀՆԱ հարաբերակցությունը, 2013 թվականին նվազել է 1.2 տոկոսային կետով, որը, թերևս, այլ գործոններից զատ, պայմանավորված է նաև դոլարային արտահայտությամբ ընթացիկ գներով համախառն ներքին արդյունքի աճի տեմպերի նկատմամբ ապրանքների և ծառայությունների ներմուծման առաջանցիկ աճի տեմպերով (115.4%): Ընդ որում, դոլարային արտահայտությամբ ընթացիկ գներով համախառն ներքին արդյունքի աճի տեմպը կազմել է 104.8%, իսկ դրամային արտահայտությամբ ընթացիկ գներով համախառն ներքին արդյունքի անվանական աճի տեմպը՝ 103.5%:

Ուսումնասիրելով արտահանման ու ներմուծման կառուցվածքն ըստ ապրանքների օգտագործման ուղղությունների, հարկ է նշել, որ, ի տարբերություն ներմուծման, Հայաստանից արտահանումը շատ միատարր է, և արտահանման գրեթե 60%-ը արդյունաբերական պաշարներ են (հումք և նյութեր), իսկ պատրաստի արտադրանքի տեսակարար կշիռը շատ ցածր է (սպառողական ապրանքներ, մթերք և խմիչք, կապիտալ ապրանքներ): Ինչ վերաբերում է ներմուծմանը, ապա շուրջ 46.1%-ը արտադրական գործընթացներին մասնակցող ապրանքներ են, մնացածը (ներառյալ՝ վառելիք և վառելանյութը)՝ գրեթե ամբողջությամբ վերջնական սպառմանն ուղղված ապրանքներ: Ընդ որում, ըստ 2013 թ. արդյունքների՝ 1.1%-ով նվազել է ներդրումների տարր հանդիսացող կապիտալ ապրանքների տեսակարար կշիռը՝ հաշվի առնելով, որ այն Հայաստանում գտնվում է ցածր մակարդակի վրա (ընդհանուր ներմուծման 13%-ը):

Աղյուսակ 8. Արտահանման ու ներմուծման կառուցվածքն ըստ ապրանքախմբերի օգտագործման ուղղությունների [14]

Ապրանքախումբ	Ծավալ, մլն ԱՄՆ դոլար				Տեսակարար կշիռ, %			
	արտահանում		ներմուծում		արտահանում		ներմուծում	
	2012	2013	2012	2013	2012	2013	2012	2013
Սպառողական ապրանքներ	50	154.5	583.9	598.9	6.7	10.4	14.3	13.7
Մթերք և խմիչք	206.4	337.5	670.1	654.9	19.8	22.8	16.4	14.9
Արդյունաբերական պաշարներ	884.2	858.2	1132.9	1311.7	61.7	58	27.8	29.9
Վառելիք և վառելանյութ	106.8	88	886.1	842.6	8	6	21.7	19.2
Կապիտալ ապրանքներ	34.4	26.8	573.2	569.4	3.2	1.8	14.1	13.0
Տրանսպորտային սարքավորումներ, սարքեր և դրանց մասեր	29.7	13.7	229.8	408.1	0.7	0.9	5.6	9.3
Այլ ապրանքներ	0	0	0.2	0.3	0	0	0	0
Ընդամենը	**1311.4**	**1478.7**	**4076.3**	**4385.9**	**100**	**100**	**100**	**100**

Ապրանքների հաշվեկշիռ

Արտաքին ապրանքաշրջանառությունը 2013 թվականին կազմել է 5364.0 մլն դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով 4.3%-ով: Ապրանքների հաշվեկշռի պակասուրդը 2092.3 մլն դոլար է (նախորդ տարվա համեմատ նվազել է 0.9%-ով): Առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և

[14] *Ինչպես արտահանման, այնպես էլ ներմուծման ցուցանիշներում քաղաքացիների կողմից իրականացված առևտուրն ընդգրկված չէ: Քաղաքացիների կատարած առևտրում հատկապես մեծ տեսակարար կշիռ ունի մարդատար ավտոմեքենաների առևտուրը:*

դրանցից իրեր» ապրանքախմբի՝ ապրանքաշրջանառությունը կազմել է 4880.6 մլն դոլար (նախորդ տարվա համեմատ աճել է 1.9%-ով), իսկ ապրանքների հաշվեկշռի պակասուրդը, առանց «Թանկարժեք և կիսա-թանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի, նվազել է 5.7%-ով և կազմել է 1985.0 մլն դոլար:

Ծառայությունների հաշվեկշիռ

«Ծառայություններ» հոդվածի պակասուրդը 2012 թվականի համեմատ նվազել է 24.0%-ով՝ կազմելով 112.1 մլն դոլար (նախորդ տարի՝ 147.6 մլն դոլար): «Ծառայություններ» հոդվածի բացասական հաշվեկշռի նվազումը հիմնականում պայմանավորված է «Շինարարություն» ծառայության դրական մնացորդի՝ 32.7 մլն դոլարով ավելացմամբ և «Այլ գործնական ծառայությունների» բացասական հաշվեկշռի՝ 13.5 մլն դոլարով նվազմամբ:

Գծապատկեր 6. Արտահանվող ծառայությունների տեսակարար կշիռները 2007 - 2013 թթ.,



Գծապատկեր 7. Ներմուծվող ծառայությունների տեսակարար կշիռները 2007 – 2013 թթ.,



2013 թվականին Հայաստանում 0.5%-ով նվազել է տնտեսության բացվածության ցուցանիշը[15] և կազմել 73.5%: Ցուցանիշի նվազումը հիմնականում պայմանավորված է դոլարային արտահայտությամբ ՀՆԱ-ի համեմատ ներմուծման միջին հակվածության ցուցանիշի աճի տեմպի համեմատաբար ցածր մակարդակով (համապատասխանաբար՝ ՀՆԱ՝ 104.8%, ներմուծման միջին հակվածություն՝ 102.6%):

[15] *Բացվածության ցուցանիշը = (ապրանքների և ծառայությունների արտահանման և ներմուծման ծավալների գումար (արտաքին առևտրի շրջանառություն)/ ՀՆԱ x 100):*

Աղյուսակ 9. Տնտեսության բացվածության ցուցանիշը (%)

Տարեթիվ	2008	2009	2010	2011	2012	2013
Բացվածության ցուցանիշ	**57.8**	**60.1**	**68.4**	**70.8**	**74.0**	**73.5**
արտահանման միջին հակվածություն	15.1	15.8	21.3	24.3	25.7	26.2
ներմուծման միջին հակվածություն	42.7	44.3	47.1	46.4	48.3	47.3

Տնտեսության բացվածության ցուցանիշի առանձին բաղադրատարրերի՝ արտահանում/ՀՆԱ *(արտահանման միջին հակվածություն)* և ներմուծում/ՀՆԱ *(ներմուծման միջին հակվածություն)* ցուցանիշների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս հասկանալու, թե ցուցանիշի ժամանակագրական շարքի փոփոխությունը կոնկրետ որ բաղադրատարրով է պայմանավորված: Հարկ է նշել, որ Հայաստանում զգալի փոքր են ինչպես արտահանում/ՀՆԱ, այնպես էլ ներմուծում/ՀՆԱ ցուցանիշները:

Եկամուտների հաշվեկշիռ

2013 թվականին «Առաջնային եկամուտներ» հոդվածի հավելուրդը կազմել է 540.5 մլն դոլար (նախորդ տարվա համեմատ աճել է 117.5 մլն դոլարով): Աճի հիմնական պատճառը արտերկրում գտնվող սեզոնային աշխատողների զուտ եկամուտների ավելացումն է 136.0 մլն դոլարով: Հարկ է նշել, որ ոչ ռեզիդենտներին վճարված ներդրումային եկամուտները 2013 թ. կազմել են 541.2 մլն դոլար, իսկ ստացումները՝ 30.7 մլն դոլար: «Սկզբնական եկամուտներ» հոդվածի՝ դեպի դուրս փոխանցումներում ինչպես վերջին տարիներին, այնպես էլ 2013 թվականին զգալի են եղել ուղղակի ներդրմամբ կազմակերպություններում ոչ ռեզիդենտների կողմից վերաներդրված եկամուտները, որոնք կազմել են 212.1 մլն դոլար, չնայած միտումը ձեռք է բերել նվազման ուղղվածություն: Ուղղակի ներդրումներից շահաբաժինների գծով եկամուտների արտահոսքի՝ 2012 թ. անկումից հետո արձանագրվել է գրեթե կրկնակի աճ՝ կազմելով 82.5 մլն դոլար: Վերջին տարիներին աճել են նաև միջֆիրմային վարկերի դիմաց վճարված տոկոսավճարները՝ 2012 թ. 27.5 մլն դոլարի փոխարեն 2013-ին կազմել են 29.1 մլն դոլար (2010 թ.՝ 4.0 մլն դոլար, 2011 թ.՝ 24.6 մլն դոլար): Վերջին տարիներին նշանակալի ավելացել են այլ ներդրումների գծով իրականացված վճարումները արտաքին աշխարհին: 2013 թ. արդյունքներով՝ արտաքին աշխարհին վճարված տոկոսավճարները կազմել են 203.7 մլն դոլար՝ նախորդ տարվա 199.6 մլն դոլարի փոխարեն (2010 թ.՝ 127.5 մլն դոլար, 2011 թ.՝ 172.4 մլն դոլար): 2013 թվականին, ՀՀ առևտրային բանկերի կողմից ներգրավված պարտավորությունների աճին զուգընթաց, ավելացել են նաև դրանց դիմաց վճարված տոկոսավճարները՝ նախորդ տարվա 105.0 մլն դոլարից հասնելով 113.5 մլն դոլարի:

Գծապատկեր 8. Եկամուտների հաշվեկշռի շարժը



Երկրորդային եկամուտներ

Երկրորդային եկամուտների ներհոսքը 2013 թվականին կազմել է 1117.9 մլն դոլար (նախորդ տարվա համեմատ ավելացել է 12.9%-ով), իսկ արտահոսքը՝ 293.4 մլն դոլար, արդյունքում հաշվեկշիռը դրական է

824.6 մլն դոլարով: Ընդ որում, պետական կառավարման համակարգով ստացված երկրորդային եկամուտները 2013 թվականին կազմել են 124.7 մլն դոլար (2012 թ.՝ 111.8 մլն դոլար): Հարկ է նշել, որ պետական կառավարման համակարգով ստացված երկրորդային զուտ եկամուտները հիմնականում կազմել են ամբողջ եկամուտների շուրջ 15%-ը (բացառությամբ 2011 թ.՝ 22.8%), որոնց հիմնական մասը տարբեր երկրներից ստացված մարդասիրական օգնությունն է: Ինչ վերաբերում է մասնավոր հատվածին, ապա դրա հիմնական մասը ոչ ռեզիդենտներից ստացված դրամական օգնություններն են:

Դրամական փոխանցումներ

Ըստ վճարային հաշվեկշռի մեթոդաբանության՝ դրամական փոխանցումներն իրենցից ներկայացնում են աշխատողների զուտ վարձատրությունը և տնային տնտեսությունների միջև ընթացիկ և կապիտալ տրանսֆերտները՝ դրամական և բնեղեն արտահայտությամբ: 2013 թվականին դրամական փոխանցումները կազմել են 2159.6 մլն դոլար (նախորդ տարվա համեմատ ավելացել են 13.1%-ով): Սեզոնային աշխատողների զուտ աշխատավարձը[16] նախորդ տարվա համեմատ ավելացել է 122.0 մլն դոլարով և կազմել 939.2 մլն դոլար: Ծառայություն մատուցող սեզոնային աշխատողների զուտ եկամուտները[17] նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել են 24.3 մլն դոլարով և կազմել 187.3 մլն դոլար: Տնային տնտեսությունների ստացած անձնական տրանսֆերտները կազմել են 963.9 մլն դոլար՝ (նախորդ տարվա համեմատ ավելացել են 120.1 մլն դոլարով): 2013 թվականին տնային տնտեսությունների կողմից ստացված կապիտալ տրանսֆերտները, նվազելով 16.2 մլն դոլարով, կազմել են 69.2 մլն դոլար՝ նախորդ տարվա 85.4 մլն դոլարի փոխարեն:

Աղյուսակ 10. Դրամական փոխանցումների ներհոսքի բաշխվածությունը ըստ վճարային հաշվեկշռի հոդվածների

մլն ԱՄՆ դոլար

	2011 թ. հունվար-դեկտեմբեր	2012 թ. հունվար-դեկտեմբեր	2013 թ. հունվար-դեկտեմբեր
Դրամական փոխանցումներ ՀՀ	**1761.7**	**1909.3**	**2159.6**
Աշխատողների զուտ աշխատավարձ[18]	768.5	817.2	939.2
Աշխատողների աշխատավարձ[18]	989.7	1052.3	1209.4
Որպես ծառայություն դասակարգված սեզոնային աշխատողների զուտ եկամուտներ	153.3	163.0	187.3
Որպես ծառայություն դասակարգված սեզոնային աշխատողների եկամուտներ	197.4	209.9	241.3
Անձնական տրանսֆերտներ	790.0	843.8	963.9
Կապիտալ տրանսֆերտներ	49.8	85.4	69.2

2013 թվականին ՀՀ բանկային համակարգով ոչ առևտրային նպատակով իրականացված փոխանցումների ներհոսքը կազմել է 1869.8 մլն դոլար, իսկ արտահոսքը՝ 324.2 մլն դոլար (նախորդ տարվա համեմատ ներհոսքն ավելացել է 10.8%-ով, իսկ արտահոսքը՝ 10.9%-ով): Փոխանցումների ինչպես ներհոսքում, այնպես էլ արտահոսքում զգալի կշիռ ունեն Ռուսաստանն ու ԱՄՆ-ն. ներհոսքում՝ համապատասխանաբար 85.9% և 4.4%, իսկ արտահոսքում՝ 55.6% և 10.2%:

2013 թվականին ՀՀ բանկային համակարգով ոչ առևտրային նպատակով իրականացված փոխանցումների ներհոսքի մեկ փոխանցման միջին գումարը 562 դոլար է (նախորդ տարի՝ 598 դոլար), արտահոսքինը՝ 1515 դոլար (նախորդ տարի՝ 1494 դոլար): Ընդ որում, ոչ առևտրային նպատակով ստացված փոխանցումների քանակը նախորդ տարվա համեմատ աճել է 18%-ով, իսկ արտահոսքի քանակը՝ 9%-ով:

---

[16] Առանց եկամտահարկի, տրանսպորտային և արտերկրում կատարված ծախսերի:

[17] Արտերկիր սեզոնային աշխատանքի մեկնողների մի մասի ստացած եկամուտը դասակարգվում է ոչ թե որպես աշխատավարձ, այլ որպես ծառայությունների արտահանում, քանի որ նրանց դեպքում չկան գործատու-աշխատող հարաբերություններ, այնուհանդերձ դրանք ներառվել են դրամական փոխանցումների ծավալում: Գնահատականը տրված է 2011 թվականից՝ հիմնվելով հարցումների տվյալների վրա:

[18] Ներառված չեն վճարային հաշվեկշռի համար կատարված այլ լրահաշվարկները, մասնավորապես՝ ՀՀ տարածքում տեղաբաշխված միջատարածքում (անկլավ) ռեզիդենտ աշխատողների ստացած աշխատավարձերը:

Աղյուսակ 11. ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց կողմից ոչ առևտրային նպատակով կատարված փոխանցումները 2011-2013 թվականներին՝ ըստ երկրների (հզ. ԱՄՆ դոլար)

	2011			2012			2013		
	Մուտք	Ելք	Զուտ մուտք	Մուտք	Ելք	Զուտ մուտք	Մուտք	Ելք	Զուտ մուտք
Ռուսաստան	1295163	141352	1153811	1444955	164588	1280367	1606643	180351	1426292
ԱՄՆ	74380	27331	47049	66554	25936	40617	82060	32933	49127
Ուկրաինա	25076	16202	8874	19094	15397	3698	17019	14812	2207
Ղազախստան	20611	1769	18842	22532	1575	20957	23758	2151	21607
Գերմանիա	10695	6905	3790	11827	7962	3866	15586	8214	7372
Իսպանիա	7674	3052	4622	6315	3842	2473	6440	4602	1838
Ֆրանսիա	10874	7668	3206	12089	5292	6797	14698	6116	8582
ԱՄԷ	3387	7660	-4273	7596	7309	287	7723	7874	-150
Չինաստան	529	8748	-8219	2967	10646	-7679	1390	11829	-10439
Թուրքիա	2136	4981	-2845	1615	4209	-2593	1838	4357	-2519
Այլ երկրներ	96434	38934	57499	91717	45493	46224	92634	50975	41659
Ընդամենը	**1546959**	**264602**	**1282357**	**1687263**	**292249**	**1395014**	**1869788**	**324213**	**1545575**

Աղյուսակ 12. Մասնավոր հատվածի երկրորդային եկամուտների և սեզոնային աշխատողների աշխատավարձի (զուտ) տեսակարար կշիռը ՀՆԱ-ում[19] (%)

Երկիր	2009	2010	2011	2012	2013
Հայաստան	14.6	15.4	16.6	18.0	19.7

ՀՀ վճարային հաշվեկշռի «Սկզբնական եկամուտներ» և «Երկրորդային եկամուտներ» հոդվածները, ինչպես և նախկինում, 2013 թվականին ևս եղել են «Ապրանքներ» և «Ծառայություններ» հոդվածների բացասական ճեղքվածքի ֆինանսավորման հիմնական աղբյուրները: Ընդ որում, նշված հոդվածների միջոցով ֆինանսավորվել է ապրանքների ու ծառայությունների հաշվեկշռի բացասական մնացորդի 61.9%-ը (նախորդ տարի՝ 51.1%-ը):

ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱՇԻՎ

Կապիտալի հաշվի հիմնական բաղադրատարր հանդիսացող կապիտալ տրանսֆերտների զուտ ներհոսքը տարվա ընթացքում կազմել է 76.1 մլն դոլար, որը 2012 թ. համեմատ նվազել է 29.4%-ով կամ 31.6 մլն դոլարով: Հարկ է նշել, որ 2013 թ. կապիտալ տրանսֆերտների զուտ ներհոսքի նվազում է արձանագրվել ինչպես պետական հատվածում՝ 21.2 մլն դոլարով կամ 47.0 %-ով (2012 թ. Չինաստանի կառավարությունը շուրջ 11 մլն դոլար արժողությամբ ավտոբուսների նվիրատվություն է կատարել), այնպես էլ մասնավոր հատվածում՝ 10.4 մլն դոլարով կամ 13.7%-ով (նվազումը հիմնականում պայմանավորված է դրամական փոխանցումների մաս կազմող անշարժ գույքի գործառնություններով):

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇԻՎ

Վճարային հաշվեկշռի ֆինանսական հաշիվը, ինչպես նախորդ տարիներին այնպես էլ 2013 թվականին եղել է բացասական, այսինքն՝ ՀՀ տնտեսությունն արտաքին աշխարհի նկատմամբ ունեցել է փոխառուի կարգավիճակ, ինչը, 2013 թ. արդյունքներով, կազմել է ավելի քան 1 մլրդ դոլար: Որպես վճարային հաշվեկշռի ֆինանսական հաշվի՝ 2013 թվականին դրսևորած առանձնահատկություն կարելի է նշել նախորդ տարվա համեմատ ուղղակի ներդրումների ծավալների նշանակալի նվազումը (շուրջ քառորդ անգամ), իսկ պորտֆելային (եվրոպարտատոմսերի թողարկում, տեղաբաշխում) ու այլ ներդրումների գծով զուտ պարտավորությունների աննախադեպ աճը. վերջիններիս արդյունքում զգալի աճել են նաև պահուստային ակտիվները:

[19] *Նախորդ տարիների հետ համադրելու նպատակով 2011 թվականից ցուցանիշը հաշվարկելիս սեզոնային աշխատողների աշխատավարձին գումարվել է նաև որպես ծառայություն մատուցող դասակարգված աշխատողների վարձատրությունը:*

Աղյուսակ 13. Ֆինանսական հաշվի կառուցվածքը 2009 – 2013 թթ.

մլն ԱՄՆ դոլար

Ցուցանիշներ	2009	2010	2011	2012	2013
Ֆինանսական հաշիվ	**-1440.0**	**-1318.5**	**-1000.9**	**-750.6**	**-1030.2**
Ուղղակի ներդրումներ	-709.6	-521.4	-437.3	-473.0	-351.5
Պորտֆելային ներդրումներ	4.2	-18.3	8.4	-0.8	-689.1
Ֆինանսական ածանցյալներ	0.0	0.0	0.0	0.0	-0.6
Այլ ներդրումներ	-1334.8	-650.0	-704.8	-228.5	-459.7
Պահուստային ակտիվներ	600.3	-128.8	132.9	-48.3	470.6

Ուղղակի ներդրումներ

2013 թվականին, նախորդ տարվա համեմատ, ուղղակի ներդրումների զուտ ներհոսքը նվազել է 121.4 մլն դոլարով (25.7 %-ով) և կազմել 351.5 մլն դոլար: Արտերկրներում ուղղակի ներդրումների ծավալները կազմել են 18.7 մլն դոլար, միևնույն ժամանակ, Հայաստանում կատարվել են 370.2 մլն դոլարի ուղղակի ներդրումներ: Ոչ ռեզիդենտների կողմից ՀՀ կազմակերպությունների բաժնետիրական կապիտալում կատարված ուղղակի ներդրումները կազմել են 187.2 մլն դոլար (նախորդ տարի՝ 328.3 մլն դոլար), 212.1 մլն դոլարը նախկինում կատարված ուղղակի ներդրումների արդյունքում կազմակերպություններում վերաներդրված շահույթն է (նախորդ տարի կազմել էր 260.8 մլն դոլար): Միևնույն ժամանակ, 29.1 մլն դոլարով նվազել են միջֆիրմային վարկերը (նախորդ տարի նվազումը կազմել էր 100.3 մլն դոլար): 2013 թվականին ավանդային կազմակերպություններում ուղղակի ներդրումները կազմել են 70.6 մլն դոլար՝ նախորդ տարվա 71.4 մլն դոլարի փոխարեն:

Գծապատկեր 9. Զուտ ուղղակի ներդրումների շարժը 2008 – 2013 թթ.



2013 թ. ընթացքում ուղղակի ներդրումներն իրական հատվածում իրականացվել են հիմնականում Ֆրանսիայի և Ռուսաստանի ներդրողների կողմից (ուղղակի ներդրումների համապատասխանաբար 36.6 %-ը և 21.6 %-ը): Ընդ որում, Ֆրանսիան ուղղակի ներդրումներ է իրականացրել հեռահաղորդակցության և խմիչքի արտադրության ճյուղերում (համապատասխանաբար 64.3%-ը և 94.7%-ը), իսկ Ռուսաստանն ուղղակի ներդրումներն իրականացրել է հեռահաղորդակցության, էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարման, ցամաքային տրանսպորտի գործունեության և խողովակաշարերով փոխադրման ոլորտներում (համապատասխանաբար 31.4 %-ը, 52.1 %-ը և 100%-ը)[20]:

[20] *Տվյալների աղբյուրը ՀՀ ԱՎԾ-ի «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2014 թվականի հունվար-փետրվարին» հրապարակման «Օտարերկրյա ուղղակի ներդրումները 2013 թվականի հունվար-դեկտեմբերին» բաժինն է: Տվյալները ներկայացնում են միայն ուղղակի ներդրումների ներհոսքը և չեն ներառում ինչպես արտահոսքի, այնպես էլ այլ ճշտումների ցուցանիշները:*

Աղյուսակ 14. Ուղղակի ներդրումներ (հաշվետու երկրում) / ՀՆԱ (%)

Երկիր	2009	2010	2011	2012	2013
Ադրբեջան	6.5	6.3	6.8	7.7	3.6
Էստոնիա	9.6	10.8	2.3	7.4	3.7
Լատվիա	-0.2	1.8	5.3	3.8	2.8
Լիտվա	0.1	2.4	3.4	1.4	1.7
Բելառուս	3.8	2.5	6.7	2.3	3.1
Հայաստան	8.8	5.7	6.4	4.9	3.5
Ղազախստան	3.7	5.0	7.3	6.8	4.3
Ղրղզստան	3.7	9.3	14.5	6.0	11.7
Մոլդովա	2.5	3.5	3.9	2.5	3.2
Ռուսաստանի Դաշնություն	6.1	2.4	2.3	2.7	2.5
Վրաստան	6.1	7.5	7.5	5.2	6.3
Ուկրաինա	4.1	4.7	4.4	4.4	2.1
Միջին	**5.6**	**3.0**	**3.1**	**3.3**	**2.7**

Տվյալների աղբյուրը Համաշխարհային բանկի տվյալների բազան և երկրների վիճակագրական ծառայությունների ինտերնետային էջերն են:

Ընդհանուր առմամբ, նախկին ԽՍՀՄ երկրներում ուղղակի ներդրումների զուտ ներհոսքը 2013 թ. նվազել է 14.0 մլրդ դոլարով, ընդ որում, եթե աճը կազմել է 1.5 մլրդ դոլար, ապա նվազումը՝ 15.5 մլրդ դոլար: Ուղղակի ներդրումների ներհոսքի էական աճ է արձանագրվել Ղրղզստանում (մոտ 2 անգամ), Բելառուսում (53%-ով), Լիտվայում (24%-ով), Վրաստանում (22%-ով): Միևնույն ժամանակ, դիտարկվող մնացած երկրներում նախորդ տարվա համեմատությամբ արձանագրվել է ուղղակի ներդրումների ներհոսքի նվազում, այսպես՝ Ադրբեջանում և Ուկրաինայում՝ կրկնակի, Էստոնիայում՝ 45%-ով, Ղազախստանում՝ 29%-ով, Հայաստանում՝ 24%-ով: Բնականաբար նվազել է նաև ուղղակի ներդրումներ/ՀՆԱ հարաբերակցության ցուցանիշը, ինչն արտացոլված է վերը ներկայացված աղյուսակում:

Պորտֆելային ներդրումներ

2013 թվականին գրանցվել է պորտֆելային ներդրումների աննախադեպ աճ, որը գլխավորապես պայմանավորված է 2013 թ. սեպտեմբերին ՀՀ կողմից թողարկված 700 մլն դոլար արժեքով եվրոպարտատոմսերի տեղաբաշխմամբ: Արդյունքում՝ պորտֆելային ներդրումների զուտ ներհոսքը կազմել է 689.1 մլն դոլար՝ նախորդ տարվա 0.8 մլն դոլարի փոխարեն:

Այլ ներդրումներ

2013 թվականին «Այլ ներդրումների» զուտ ներհոսքը կազմել է 459.7 մլն դոլար (2012 թվականին՝ 228.5 մլն դոլար): Արտաքին աշխարհի նկատմամբ ակտիվները նվազել են 88.6 մլն դոլարով (նախորդ տարի՝ 151.9 մլն դոլար աճ): Ակտիվների նվազումը հիմնականում պայմանավորված է կանխիկ դրամական միջոցների և ավանդների՝ 107.5 մլն դոլար նվազմամբ: Միևնույն ժամանակ, պարտավորություններն արտաքին աշխարհի նկատմամբ աճել են 371.1 մլն դոլարով, և 2012 թվականի համեմատ աճի նվազումն աննշան է՝ 9.3 մլն դոլար: Արտաքին աշխարհի նկատմամբ պարտավորությունների աճը նույնպես պայմանավորված է կանխիկ դրամական միջոցների ու ավանդների 437.7 մլն դոլար աճով: Որպես այլ ներդրումների գծով 2013 թ. արձանագրված առանձնահատկություն, պետք է նշել, որ նախորդ տարիների համեմատ տեղի է ունեցել վարկային զուտ պարտավորությունների նվազում՝ արտաքին վարկերի գծով ստանձնած պարտավորությունների մարումները գերազանցել են ստացված նոր վարկերի ծավալները 83.3 մլն դոլարով: Այլ ներդրումների մաս կազմող ֆինանսական մյուս գործիքների (առևտրային վարկեր և կանխավճարներ, այլ հաշիվներ) ծավալները նվազել են համապատասխանաբար 51.5 և 10.8 մլն դոլարով:

Աղյուսակ 15. Օտարերկրյա այլ ներդրումների հոսքերը 2008 - 2013 թթ.

մլն ԱՄՆ դոլար

	2008	2009	2010	2011	2012	2013
Այլ ներդրումներ	**-360.8**	**-1334.8**	**-650.0**	**-704.8**	**-228.5**	**-545.2**
Զուտ ֆինանսական ակտիվների ձեռքբերում	273.9	281.3	133.2	120.8	151.9	-107.5
Զուտ ֆինանսական պարտավորությունների ստանձնում	634.7	1616.2	783.2	825.6	380.4	437.7
Այլ կապիտալ	**1.6**	**0.3**	**1.9**	**2.4**	**2.8**	**107.3**
Զուտ ֆինանսական ակտիվների ձեռքբերում	1.6	0.3	1.9	2.4	2.8	24.1
Զուտ ֆինանսական պարտավորությունների ստանձնում	-	-	-	-	-	-83.3
Դրամական միջոցներ և ավանդներ	**93.2**	**58.6**	**-15.9**	**-109.8**	**205.7**	**3.8**
Զուտ ֆինանսական ակտիվների ձեռքբերում	235.4	111.2	38.5	104.1	190.9	3.7
Զուտ ֆինանսական պարտավորությունների ստանձնում	142.2	52.6	54.4	213.9	-14.8	0.0
Վարկեր	**-453.2**	**-1255.6**	**-617.3**	**-579.9**	**-346.6**	**-9.3**
Զուտ ֆինանսական ակտիվների ձեռքբերում	32.0	120.2	72.3	-16.2	-48.0	-0.5
Զուտ ֆինանսական պարտավորությունների ստանձնում	485.2	1375.8	689.7	563.7	298.6	8.8
Ապահովագրական, կենսաթոշակային և ստանդարտացված ծրագրեր	0.0	**0.0**	**0.0**	**-0.4**	**0.8**	**-19.5**
Զուտ ֆինանսական ակտիվների ձեռքբերում	-	-	-	-	1.1	-11.6
Զուտ ֆինանսական պարտավորությունների ստանձնում	-	-	-	0.4	0.3	7.9
Առևտրային վարկեր և կանխավճարներ	**14.9**	**-39.0**	**-1.4**	**-10.1**	**-60.8**	**0.0**
Զուտ ֆինանսական ակտիվների ձեռքբերում	17.6	11.0	12.7	17.0	1.2	-545.2
Զուտ ֆինանսական պարտավորությունների ստանձնում	2.7	50.0	14.1	27.2	62.0	-107.5
Այլ հաշիվներ ստացվող/վճարվող	**-17.2**	**38.5**	**-17.4**	**-7.0**	**-30.3**	**437.7**
Զուտ ֆինանսական ակտիվների ձեռքբերում	-12.7	38.6	7.7	13.5	4.0	107.3
Զուտ ֆինանսական պարտավորությունների ստանձնում	4.6	0.1	25.1	20.5	34.3	24.1
ՀՓԻ (պարտավորությունների զուտ ստանձնում)	**0.0**	**137.7**	**0.0**	**0.0**	**0.0**	**-83.3**

Կենտրոնական բանկ: Կենտրոնական բանկի արտաքին պարտավորություններն այլ ներդրումների գծով 2013 թվականին նվազել են 91.5 մլն դոլարով (նախորդ տարի՝ 24.9 մլն դոլարով): 2013 թվականին վարկերի գծով իրականացվել են 194.3 մլն դոլարի վճարումներ և ստացվել են 102.8 մլն դոլարի նոր բաշխումներ, այդ թվում՝ ԱՄՀ՝ 88.2 մլն դոլար, ինչպես նաև այլ վարկերի գծով՝ 14.5 մլն դոլար[21]:

2013 թվականին ՀՀ կենտրոնական բանկի համախառն արտաքին պահուստներն աճել են 470.6 մլն դոլարով և տարվա վերջի դրությամբ կազմել 2251.6 մլն դոլար: Տարվա ընթացքում Կենտրոնական բանկի կողմից արտարժույթի շուկայում իրականացված արտարժույթի զուտ վաճառքը կազմել է -72.2 մլն դոլար (ներառված չեն սվոպ գործառնությունները):

Կենտրոնական բանկի համախառն արտաքին պահուստների համարժեքությունը գնահատող ցուցանիշները ունեցել են հետևյալ շարժը:

Գծապատկեր 10. Համախառն արտաքին պահուստները և ներմուծման ծածկույթը 2009-2013 թթ.



[21] *Վարկերի գծով վճարումները ներառում են հիմնական գումարի մարումները և տոկոսավճարները, իսկ ստացումները՝ փաստացի բաշխումներն ու հաշվեգրված տոկոսավճարները:*

Ներմուծման ծածկույթի ցուցանիշը 2013 թվականի համար կազմել է 5.5 ամիս (նախորդ տարի՝ 4.5 ամիս): Աճի հիմնական պատճառը նախորդ տարվա վերջի համեմատ պահուստային ակտիվների մոտ 25.1%-ով աճն է: Նշենք, որ միջազգային պրակտիկայում զարգացող երկրների համար որպես ներմուծման ծածկույթի ցուցանիշի ընդունելի նվազագույն սահման է համարվում 3 ամսվա նշագիծը, և հիմնականում պետք է պահպանվի հատկապես այն երկրներում, որոնց մուտքը միջազգային կապիտալի շուկաներ սահմանափակ է:

Համախառն արտաքին պահուստների բավարարության գնահատման մյուս կարևորագույն ցուցանիշը համախառն արտաքին պահուստներ/դրամային զանգված ցուցանիշն է, որը ցույց է տալիս, թե ինչպիսին է ամբողջ դրամային զանգվածն արտարժույթով փոխարկելու հնարավորությունը կապիտալի հնարավոր արտահոսքի պայմաններում: Նշված ցուցանիշը 2013 թվականին կազմել է 107.7%՝ նախորդ տարվա 98.4%-ի փոխարեն: Ընդունելի նվազագույն նշագիծ է համարվում դրամային զանգվածում պահուստների 5-20% մակարդակը:

Աղյուսակ 16. Համախառն արտաքին պահուստներ/դրամային զանգված (%)

Ցուցանիշ	2009	2010	2011	2012	2013
Համախառն արտաքին պահուստներ / դրամային զանգված	167.9	130.0	113.0	98.4	107.7

Ավանդային կազմակերպություններ՝ բացի Կենտրոնական բանկից: Ավանդային կազմակերպությունների զուտ ներդրումային դիրքը[22] 2013 թվականի գործառնությունների հաշվին վատացել է 578.0 մլն դոլարով: Ընդ որում, արտաքին ակտիվների փոփոխությունը 63.5 մլն դոլար է (2012 թ.՝ ընդամենը 2.2 մլն դոլար), իսկ պարտավորություններն աճել են 641.4 մլն դոլարով (2012 թ.՝ ընդամենը 382.3 մլն դոլարով): Ավանդային կազմակերպությունների ակտիվների 63.7 մլն դոլար աճի հիմնական մասը (54.5 մլն դոլար) կազմել է ՀՀ բանկերի՝ արտասահմանյան բանկերում ունեցած ավանդների աճը: Միևնույն ժամանակ նշենք, որ ակտիվային ավանդների աճը պայմանավորված է բացառապես կարճաժամկետ ավանդների աճով:

Պարտավորությունների աճը հիմնականում պայմանավորված է ՀՀ ավանդային կազմակերպությունների՝ ոչ ռեզիդենտներից կանխիկ դրամական միջոցների ու ավանդների ներգրավմամբ (437.6 մլն դոլար), վարկերի ներգրավմամբ (123.5 մլն դոլար) և ուղղակի ներդրումների ավելացմամբ՝ 70.6 մլն դոլարով: Հարկ է նշել նաև, որ եթե ներգրավված վարկերի հիմնական մասը երկարաժամկետ են, ապա կանխիկ դրամական միջոցների ու ավանդների հիմնական մասը՝ կարճաժամկետ:

Գծապատկեր 11. Ավանդային կազմակերպությունների զուտ ներդրումային դիրքը 2008-2013 թթ.[23]



[22] *Ըստ վճարային հաշվեկշռի մեթոդաբանության: Ի տարբերություն դրամավարկային վիճակագրության, վճարային հաշվեկշռի կազմման մեթոդաբանության համաձայն՝ ավանդային կազմակերպությունների արտաքին ակտիվներ և պարտավորություններ ձևավորող գործառնությունների փոփոխությունը հաշվարկվում է առանց վերագնահատման և ներառում է նաև ոչ փոխարկելի արտարժույթով գործառնությունները: Ընդ որում, վճարային հաշվեկշռում ավանդային կազմակերպությունների համակարգի մեջ ներառվում են նաև վարկային կազմակերպությունների արտաքին ակտիվների ու պարտավորությունների հետ կապված գործառնությունները:*

[23] *Ավանդային կազմակերպությունների և վարկային կազմակերպությունների զուտ ներդրումային դիրքը ժամանակահատվածի վերջի դրությամբ ներառում է նաև վերագնահատումը:*

Պետական կառավարման մարմիններ: 2013 թվականին ՀՀ պետական կառավարման մարմինների արտաքին պարտավորություններն ավելացել են 296.9 մլն դոլարով (նախորդ տարի՝ 231.3 մլն դոլարով):

Ընդ որում, պետական հատվածի վարկերի ստացումները տարվա ընթացքում կազմել են 262.4 մլն դոլար (նախորդ տարի՝ 345.2 մլն դոլար): Ներհոսքի 55.5%-ը Համաշխարհային բանկի և Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի (նախորդ տարի՝ 45.9%-ը), 15.9%-ը՝ Ասիական զարգացման բանկի (նախորդ տարի՝ 7.1%-ը) կողմից տրամադրված վարկերն են:

Տարվա ընթացքում պետական հատվածի վարկերի գծով վճարումները կազմել են 664.3 մլն դոլար (նախորդ տարի՝ 113.6 մլն դոլար) [24]:

Մասնավոր հատված (առանց առևտրային բանկերի): Մասնավոր հատվածի այլ ներդրումները, հաշվարկված զուտ հիմքով, տարվա ընթացքում ավելացել են 280.8 մլն դոլարով (զուտ պարտավորությունների աճ), ընդ որում՝ ակտիվներն ավելացել են մոտ 7.4 մլն դոլարով (2012 թ. ավելացել էին 0.8 մլն դոլարով), իսկ պարտավորությունները՝ 288.2 մլն դոլարով (2012 թ. նվազել էին 135.8 մլն դոլարով):

Պարտավորությունների կտրուկ աճը հիմնականում պայմանավորված է մասնավոր ընկերությունների կողմից արտերկրից ներգրավված նոր վարկերով: Այսպես՝ 2013 թվականին մասնավոր հատվածի կողմից ներգրավվել են 325.1 մլն դոլարի երկարաժամկետ և 8.6 մլն դոլարի կարճաժամկետ վարկեր: Միևնույն ժամանակ, մարվել են 32.4 մլն դոլարի երկարաժամկետ և 6.0 մլն դոլարի կարճաժամկետ պարտավորություններ: Նախորդ տարվա համեմատ շուրջ 60.1 մլն դոլարով նվազել է առևտրային վարկերի միջոցով պարտավորությունների ներգրավումը և կազմել է 1.8 մլն դոլար: Նշված ցուցանիշը 2013 թ. ապրանքների ներմուծման 0.1 %-ն է (նախորդ տարի՝ 1.7%-ը):

Միջազգային ներդրումային դիրք

2013 թվականի վերջի դրությամբ Հայաստանի զուտ ներդրումային դիրքը, ինչպես և նախորդ տարիներին, բացասական է. կազմել է 9017.1 մլն դոլար՝ նախորդ տարվա վերջի համեմատ աճելով 1015.2 մլն դոլարով: Ընդ որում, ակտիվներն ավելացել են 385.5 մլն դոլարով, իսկ պարտավորությունները՝ 1400.7 մլն դոլարով: 2013 թ. վերջին ակտիվները կազմել են 4383.9 մլն դոլար, որի հիմնական մասը պահուստային ակտիվներն են (2251.6 մլն դոլար) և այլ ներդրումները (1786.6 մլն դոլար, որից 1414.4 մլն դոլարը կանխիկ դրամական միջոցներն ու ավանդներն են): Արտաքին աշխարհի նկատմամբ պարտավորությունները կազմել են 13401.0 մլն դոլար, որի 52.9%-ը այլ ներդրումներն են (գլխավորապես՝ վարկեր), 41.7%-ը՝ ուղղակի ներդրումները, իսկ 5.4%-ը՝ պորտֆելային ներդրումները (եվրոպարտատոմսերը):

Ըստ ներդրումային դիրքի՝ Կառավարության կողմից ներգրավված պարտավորությունները 2013 թ. վերջի դրությամբ կազմել են 3405.0 մլն դոլար, իսկ զուտ ներդրումային դիրքը բացասական է՝ 3385.1 մլն դոլար: Կենտրոնական բանկի կողմից ներգրավված միջոցները 2013 թ. վերջին կազմել են 646.1 մլն դոլար, իսկ ներդրումային դիրքը դրական է 1725.1 մլն դոլարով: Ավանդային կազմակերպությունների ու մասնավոր հատվածի ներդրումային դիրքերը (ներառյալ՝ արտերկրյա ուղղակի ներդրումները) նույնպես բացասական են համապատասխանաբար 2561.9 և 4794.6 մլն դոլարով:

Հարկ է նշել, որ նախորդ տարվա համեմատ 1400.7 մլն դոլարի պարտավորությունների աճը տեղի է ունեցել հիմնականում պորտֆելային ներդրումների գծով՝ 691.5 մլն դոլար, 394.4 մլն դոլարը՝ այլ ներդրումների գծով և 314.2 մլն դոլարը՝ ուղղակի ներդրումների գծով:

Աղյուսակ 17. Հայաստանի միջազգային ներդրումային դիրքը 2012-2013 թվականներին

մլն ԱՄՆ դոլար

	2012	2013	Բացարձակ փոփոխությունը	Աճի տեմպը, %
Զուտ միջազգային ներդրումային դիրքը	**-8001.9**	**-9017.1**	**-1015.2**	**112.7**
ԱԿՏԻՎՆԵՐ	**3998.4**	**4383.9**	**385.5**	**109.6**
Ուղղակի ներդրումներ	**352.7**	**325.8**	**-26.9**	**92.4**
Բաժնետիրական կապիտալին և ներդրումային ֆոնդերին մասնակցություն	214.7	187.8	-26.9	87.5
Պարտքի գործիքներ	138.0	138.0	0.0	100.0

[24] *Վարկերի գծով վճարումները ներառում են հիմնական գումարի մարումները և տոկոսավճարները, իսկ ստացումները՝ փաստացի բաշխումներն ու հաշվեգրված տոկոսավճարները:*

	2012	2013	Բացարձակ փոփոխությունը	Աճի տեմպը, %
Պորտֆելային ներդրումներ	**14.0**	**19.4**	**5.3**	**138.1**
Բաժնետիրական կապիտալում և ներդրումային ֆոնդերում մասնակցություն	2.4	3.3	0.9	140.1
Պարտքի գործիքներ	11.7	16.0	4.4	137.7
Ֆինանսական ածանցյալներ	**0.0**	**0.5**	**0.5**	**-**
Այլ ներդրումներ	**1832.4**	**1786.6**	**-45.8**	**97.5**
Այլ կապիտալ	15.6	17.7	2.1	113.4
Դրամական միջոցներ և ավանդներ	1454.3	1414.4	-39.9	97.3
Վարկեր	211.5	222.9	11.4	105.4
Ապահովագրական, կենսաթոշակային և ստանդարտացված ծրագրեր	2.6	6.4	3.8	244.0
Առևտրային վարկեր և կանխավճարներ	82.2	85.7	3.5	104.2
Այլ հաշիվներ ստացվող-այլ	66.1	39.6	-26.5	59.9
Պահուստային ակտիվներ	**1799.3**	**2251.6**	**452.3**	**125.1**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**12000.3**	**13401.0**	**1400.7**	**111.7**
Ուղղակի ներդրումներ	**5272.3**	**5586.5**	**314.2**	**106.0**
Բաժնետիրական կապիտալին և ներդրումային ֆոնդերին մասնակցություն	4322.9	4691.0	368.1	108.5
Պարտքի գործիքներ	949.4	895.5	-53.9	94.3
Պորտֆելային ներդրումներ	**34.4**	**725.9**	**691.5**	**2108.3**
Բաժնետիրական կապիտալին և ներդրումային ֆոնդերին մասնակցություն	21.3	13.4	-8.0	62.6
Պարտքի գործիքներ	13.1	712.5	699.4	5447.0
Ֆինանսական ածանցյալներ	**0.0**	**0.6**	**0.6**	**-**
Այլ ներդրումներ	**6693.6**	**7088.0**	**394.4**	**105.9**
Այլ կապիտալ	0.0	1.4	1.4	-
Դրամական միջոցներ և ավանդներ	627.4	1148.5	521.1	183.1
Վարկեր	5712.0	5612.4	-99.6	98.3
Ապահովագրական, կենսաթոշակային և ստանդարտացված ծրագրեր	0.8	0.8	0.0	94.7
Առևտրային վարկեր և կանխավճարներ	107.4	73.2	-34.2	68.2
Այլ հաշիվներ վճարվող-այլ	110.8	116.3	5.5	104.9
Հատուկ փոխառության իրավունք	135.2	135.5	0.3	100.2

Եթե դիտարկենք տնտեսության հատվածներն առանձին, ապա կարելի է տեսնել, որ դրական ներդրումային դիրք ունի միայն Կենտրոնական բանկը, իսկ ավանդային կազմակերպությունները, պետական և մասնավոր հատվածները ունեն բացասական ներդրումային դիրք:

Գծապատկեր 12. Տնտեսության հատվածների զուտ ներդրումային դիրքերը 2010-2013 թթ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՐՏՔԸ 2013 ԹՎԱԿԱՆԻՆ

Վիճակագրության վարչություն

Հաշվի առնելով ճգնաժամային տարիների փորձը՝ ներկայումս ՀՀ-ում ավելի ու ավելի է կարևորվում պարտքի արդյունավետ կառավարումը: Պարտքի արդյունավետ կառավարման խնդիրները գտնվել են ինչպես Կառավարության, այնպես էլ հասարակության ուշադրության կենտրոնում: 2013 թվականին հաստատվել է ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2014-2016 թթ. ռազմավարական ծրագիրը: Վերջինիս շրջանակներում ՀՀ կառավարությունը պետական պարտքի կառավարման գործընթացում շարունակելու է հետևել պարտքի կառավարման թափանցիկության, գործողությունների հրապարակայնության, ներդրողների վստահության ամրապնդման և հաշվետվողականության սկզբունքներին: Փաստաթղթում քննարկվել են արտաքին պարտքի կայունության խնդիրները, ինչպես նաև արտաքին պարտքի կառավարման ռազմավարությունը 2014-2016 թվականներին[25]:

Անդրադառնալով արտաքին պարտքի բեռը գնահատող ցուցանիշներին՝ նշենք, որ 2013 թվականին և՛ արտաքին պարտք/ապրանքների և ծառայությունների արտահանում ցուցանիշը, և՛ արտաքին պարտք/ՀՆԱ ցուցանիշը նախորդ տարվա համեմատ ունեցել են աճի միտում: Սակայն արտաքին պետական պարտք/ապրանքների և ծառայությունների արտահանում և արտաքին պետական պարտք/ՀՆԱ ցուցանիշները նախորդ տարվա համեմատ բարելավվել են: Սա վկայում է այն մասին, որ ի տարբերություն նախորդ տարվա, 2013 թվականին մասնավոր հատվածի կողմից ներգրավված միջոցներն էականորեն աճել են: Վերջինս, թեև մեծացնում է պարտքի բեռը (ավելի ցածր է արտոնյալության աստիճանը՝ ի տարբերություն պետական վարկերի), սակայն վկայում է մասնավոր հատվածի՝ արտաքին աշխարհից միջոցներ ներգրավելու հնարավորության մասին:

Չնայած դրան, ըստ միջազգային կառույցների և ՀՀ կառավարության գնահատականների, առաջիկա տարիներին ՀՀ արտաքին պարտքի և, հատկապես, պետական պարտքի սպասարկման խնդիրներ չեն առաջանա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՐՏՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ 2013 ԹՎԱԿԱՆԻՆ

Հայաստանի արտաքին պարտքը 2013 թվականի վերջի դրությամբ կազմել է 8694.6 մլն ԱՄՆ դոլար[26], որից 4049.7 մլն ԱՄՆ դոլարը Կառավարության և Կենտրոնական բանկի արտաքին պարտքն է, 2407.6 մլն ԱՄՆ դոլարը՝ ավանդային կազմակերպությունների (բացի Կենտրոնական բանկից) պարտքը (ներառյալ՝ միջֆիրմային վարկերը), 2237.3 մլն ԱՄՆ դոլարը՝ ոչ բանկ մասնավոր հատվածի պարտքը (ներառյալ՝ միջֆիրմային վարկերը):

Գծապատկեր 1. ՀՀ արտաքին պարտքի կառուցվածքը 2011-2013 թվականներին



[25] *Փաստաթուղթը հասանելի է www.mfe.am/index.php?fl=255&lang=1 հասցեով:*

[26] *2011 թվականից արտաքին պարտքի վերաբերյալ տվյալների աղբյուրը՝ ՀՀ ԿԲ: Արտաքին պարտքը կազմվել է ԱՄՀ «Արտաքին պարտքի վիճակագրություն» ձեռնարկում սահմանված մեթոդաբանությամբ, համաձայն որի՝ արտաքին պարտքն ընդգրկում է տնտեսության հատվածների արտաքին բոլոր պարտավորությունները՝ բացառությամբ բաժնետիրական կապիտալում կատարվող ներդրումների (ընդ որում, ուղղակի ներդրումների միջֆիրմային վարկերը ներառվում են արտաքին պարտքի մեջ) և ֆինանսական ածանցյալների: Արտաքին պարտքի ցուցանիշները հաշվառված են հաշվապահական հաշվառման կուտակման սկզբունքով:*

2013 թվականի վերջի դրությամբ պետական պարտքի կշիռն ընդհանուր պարտքի մեջ, նախորդ տարվա 50.8%-ի համեմատ, նվազել է և կազմել 46.6%, իսկ մասնավորինը՝ 53.4%:

ՀՀ կառավարության և Կենտրոնական բանկի արտաքին պարտքը 2013 թվականին, նախորդ տարվա համեմատ, ավելացել է 163.2 մլն ԱՄՆ դոլարով և տարեվերջին կազմել 4049.7 մլն ԱՄՆ դոլար: Վերջինիս 79.3%-ը կազմում են երկարաժամկետ արտաքին վարկերը, 17.3%-ը՝ պարտքային գործիքները, իսկ 3.3%-ը՝ ՀՀ ԿԲ-ում ՀՓԻ տեղաբաշխումը:

ՀՀ ավանդային կազմակերպությունների արտաքին պարտքը (հիմնականում բաղկացած է ոչ ռեզիդենտներից ներգրավված վարկերից՝ 1192.1 մլն ԱՄՆ դոլար, և ավանդներից՝ 1148.4 մլն ԱՄՆ դոլար) 2013 թվականին ավելացել է 478.6 մլն ԱՄՆ դոլարով և տարեվերջին կազմել 2407.6 մլն ԱՄՆ դոլար (ներառյալ՝ ավանդային կազմակերպությունների կողմից ներգրավված միջֆիրմային վարկերը): Միջազգային կազմակերպություններից ներգրավված վարկերը կազմել են մոտ 36.4%: ՀՀ ավանդային կազմակերպությունների կողմից ներգրավված երկարաժամկետ վարկերը, նախորդ տարվա համեմատ, ավելացել են 27.4 մլն ԱՄՆ դոլարով[27], մասնավորապես՝ տարվա ընթացքում ներգրավվել են 375.3 մլն ԱՄՆ դոլար երկարաժամկետ վարկային միջոցներ, իսկ նախկինում ձեռք բերված երկարաժամկետ վարկերի դիմաց կատարվել են 228.5 մլն ԱՄՆ դոլար հիմնական գումարի մարումներ: 2013 թվականի վերջի դրությամբ ներգրավված վարկերի միջին կշռված տոկոսադրույքը 2012 թվականի համեմատ նվազել է և կազմել 5.8% (2012 թվականի վերջին՝ 6.4%), իսկ միջին ժամկետայնությունը՝ 4.2 տարի (2012 թվականին՝ 5.0 տարի): 2013 թվականին ավանդային կազմակերպությունների հիմնական վարկատու երկրներն էին՝ Ռուսաստանը, Լյուքսեմբուրգը, Նիդեռլանդները, Միացյալ թագավորությունը, Գերմանիան: Զգալի են միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված միջոցները:

Գծապատկեր 2. Մասնավոր հատվածի պարտքային պարտավորությունները 2011-2013 թվականներին



Աղյուսակ 1. Մասնավոր հատվածի պարտքային պարտավորությունների կառուցվածքը (ներառյալ՝ ավանդային կազմակերպությունները)

մլն ԱՄՆ դոլար

Պարտավորություններ	2011	2012	2013
Ընդամենը մասնավոր հատվածի պարտքային պարտավորություններ, որից՝	3707.7	3769.5	4644.9
Վարկեր	1929.6	1961.4	2400.4
Առևտրային վարկեր և կանխավճարներ	151.3	107.2	73.1
Կանխիկ դրամական միջոցներ և ավանդներ	644.7	627.4	1148.4
Միջֆիրմային պարտավորություններ	900.4	949.4	895.5
Այլ պարտավորություններ	81.7	124.1	127.5

ՀՀ այլ մասնավոր հատվածի (առանց ավանդային կազմակերպությունների) արտաքին պարտքը, նախորդ տարվա համեմատ, ավելացել է 396.8 մլն ԱՄՆ դոլարով և կազմել 2237.3 մլն ԱՄՆ դոլար (ներառյալ՝ մասնավոր հատվածի կազմակերպությունների կողմից ներգրավված միջֆիրմային վարկերը): Պարտքի 54.0%-ը կամ 1208.4 մլն ԱՄՆ դոլարը կազմել են վարկերը, 39.8%-ը կամ 889.9 մլն ԱՄՆ դոլարը՝ միջ-

[27] *Ավանդային կազմակերպությունների կողմից ներգրավված երկարաժամկետ վարկերի դիրքը 2013 թվականի վերջի դրությամբ նվազել է մոտ 62 մլն ԱՄՆ դոլարով՝ պայմանավորված վերադասակարգումներով:*

ֆիրմային վարկերը, իսկ մնացած 139.0 մլն ԱՄՆ դոլարը՝ այլ պարտավորությունները ներառյալ առևտրային վարկերը և կանխավճարները: Մասնավոր հատվածի արտաքին պարտքն ավելացել է հիմնականում վարկերի ծավալների աճի հաշվին, որոնք 2012 թվականի վերջին 712.8 մլն ԱՄՆ դոլարի նկատմամբ ավելացել են 69.5%-ով: 2013 թվականին ֆինանսական միջոցներ են ստացվել հիմնականում Արգենտինայից (32.3%), Կիպրոսից (23.3%) և Կանադայից (16.4%):

Գծապատկեր 3. Հայաստանի արտաքին պարտքի կառուցվածքն ըստ գործիքների և վարկառուների (2013 թ. վերջին)



Ըստ ՀՀ ֆինանսների նախարարության տվյալների՝ ՀՀ կառավարության և Կենտրոնական բանկի արտաքին պարտքը 2013 թվականի վերջի դրությամբ[28] կազմել է 3902.1 մլն ԱՄՆ դոլար, որից 2693.8 մլն ԱՄՆ դոլարը ՀՀ կառավարությանը տրված վարկերն են, 700 մլն ԱՄՆ դոլարը՝ 2013 թվականին թողարկված եվրոպարտատոմսերը, իսկ 508.3 մլն ԱՄՆ դոլարը՝ ՀՀ կենտրոնական բանկի ներգրաված պարտավորությունները:

2013 թվականին արտաքին պետական վարկերի ներհոսքը կազմել է 319.4 մլն ԱՄՆ դոլար, որի մոտ 89.8%-ը բազմակողմանի պաշտոնական աղբյուրներից ներգրավված միջոցներն են: Այսպես՝ Համաշխարհային բանկից և Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամից տարվա ընթացքում ներգրավվել են 133.3 մլն ԱՄՆ դոլարի (որից Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամից՝ 1.5 մլն ԱՄՆ դոլարի), Արժույթի միջազգային հիմնադրամից՝ 82.8 մլն ԱՄՆ դոլարի, Եվրոմիությունից, Եվրոպական ներդրումային բանկից և Եվրոպական զարգացման բանկից՝ 26.5 մլն ԱՄՆ դոլարի, Ասիական զարգացման բանկից՝ 39.5 մլն ԱՄՆ դոլարի և Նավթ արդյունահանող երկրների կազմակերպությունից՝ 4.6 մլն ԱՄՆ դոլարի ֆինանսական միջոցներ:

Հայաստանի հարաբերությունները ԱՄՀ հետ

Հայաստանի Հանրապետությունը, 1992 թվականի մայիսի 28-ին ստորագրելով ԱՄՀ-ի Համաձայնագրի հոդվածները, դարձավ Հիմնադրամի անդամ: Կառավարիչների խորհրդում Հայաստանը ներկայացնում են ՀՀ ֆինանսների նախարարը (Կառավարիչ) և ՀՀ կենտրոնական բանկի նախագահը (Կառավարչի տեղակալ): Տնօրենների խորհրդում Հայաստանը Բուլղարիայի, Կիպրոսի, Իսրայելի, Մոլդովայի, Ուկրաինայի, Նիդեռլանդների, Ռումինիայի, Վրաստանի, Մակեդոնիայի, Խորվաթիայի, Բոսնիայի և Հերցեգովինայի հետ միևնույն խմբում է, որի Կառավարիչը ներկայումս Նիդեռլանդների ներկայացուցիչն է:

Հայաստանի բաժնեմասը (մինչև բաժնեմասերի 11-րդ ընդհանուր վերանայումը) կազմել է 67.5 մլն ՀՓԻ, իսկ դրանից հետո (1998 թվականի հունվարի 30) ավելացվել է և այժմ կազմում է 92 մլն ՀՓԻ:

[28] *Արտաքին պետական և պետական երաշխիքով վարկերի վիճակագրության հավաքագրման պատասխանատուն ՀՀ ֆինանսների նախարարությունն է: Ընդ որում, այս ցուցանիշը հաշվարկվում է հաշվապահական հաշվառման կանխիկ սկզբունքով և ներառում է միայն արտաքին աշխարհից ներգրավված վարկերի փաստացի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը:*

Հայաստանը ԱՄՀ հետ կնքել է 9 վարկային համաձայնագրեր: Ընդ որում՝ 1995 թվականի «Սթենդ-բայ» և ՀԲՖՄ (STF) ծրագրերի վարկերի մարումն ավարտված է: Բացի 2009 թվականին կնքված «Սթենդ-բայ» և 2010 թվականին կնքված ԸՎԳ (ECF) համաձայնագրերից՝ բոլոր վարկերը ստացել է Կենտրոնական բանկը: 2010 թվականին կնքված EFF և ECF համաձայնագրերով 2013 թվականի ընթացքում համապատասխանաբար ստացված 28.4 և 26.6 մլն ՀՓի գումարներն ամբողջությամբ ստացել է Կենտրոնական բանկը: 2013 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Հայաստանի պարտավորությունները ԱՄՀ նկատմամբ կազմել են 379.7 մլն ՀՓԻ, որից ԿԲ պարտավորությունները կազմում են 236.7 մլն ՀՓԻ, իսկ Կառավարության պարտավորությունները՝ 143.0 մլն ՀՓի:

մլն ՀՓԻ

Մեխանիզմների տեսակը	*Համաձայնագրի կնքման ամսաթիվը*	*Գումարն ըստ համաձայնագրի*	*Պարտավորությունները 31.12.2013 թ. դրությամբ*
ՀԲՖՄ (STF)	*15.12.1994*	*33.8*	*0.0*
«Սթենդ-բայ»	*28.06.1995*	*43.9*[1]	*0.0*
ԱՆՏԱ (PRGF) I[2]	*14.02.1996*	*109.4*	*0.0*
ԸՎԳ (ECF) II[3]	*23.05.2001*	*69.0*	*2.8*
ԸՎԳ (ECF) III[3]	*25.05.2005*	*23.0*	*13.8*
ԸՎԳ (ECF) IV[3]	*17.11.2008*	*9.2*[4]	*1.3*
«Սթենդ-բայ»	*06.03.2009*	*533.6*[5]	*95.0*
ԸՖԳ (EFF)	*28.06.2010*	*133.4*	*133.4*
ԸՎԳ (ECF) V	*28.06.2010*	*133.4*	*133.4*

[1] Տրամադրվել է ընդամենը 13.5 մլն ՀՓԻ:
[2] Կնքվել է որպես ESAF համաձայնագիր, իսկ 1999 թվականի նոյեմբերի 22-ին վերանվանվել է PRGF:
[3] Կնքվել է որպես PRGF համաձայնագիր, իսկ 2010 թվականի նոյեմբերի 22-ին վերանվանվել է ECF (ընդլայնված վարկային գործիք):
[4] Տրամադրվել է ընդամենը 1.3 մլն ՀՓԻ:
[5] Տրամադրվել է ընդամենը 350.4 մլն ՀՓԻ:

Համաշխարհային բանկի կողմից գումարները տրամադրվել են հիմնականում «Զարգացման քաղաքականության գործողությունների վարկ» (72.0 մլն ԱՄՆ դոլար) «Կենսական նշանակության ճանապարհների բարելավման ֆինանսավորում» (16.6 մլն ԱՄՆ դոլար), «Էլեկտրոնային հանրության և մրցունակության բարելավման ծրագիր» (5.6 մլն ԱՄՆ դոլար) և «Ոռոգման համակարգի բարելավման ծրագիր» (5.2 մլն ԱՄՆ դոլար) վարկային ծրագրերի իրականացման համար: ԱՄՀ կողմից տրված 82.8 մլն ԱՄՆ դոլար վարկային միջոցները տրամադրվել են EFF՝ 42.9 մլն ԱՄՆ դոլար և ECF՝ 39.9 մլն ԱՄՆ դոլար վարկային ծրագրերի շրջանակներում: Ասիական զարգացման բանկից ստացվել է 19.9 մլն ԱՄՆ դոլար՝ «Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցք» (I և II մասնաբաժիններ), և 10.0 մլն ԱՄՆ դոլար՝ «Կանանց ձեռներեցության աջակցման սեկտորի զարգացման» ծրագրերի շրջանակներում: Երկկողմանի վարկատուներից տարվա ընթացքում ներգրավված 32.7 մլն ԱՄՆ դոլարի մեծ մասը՝ 25.5 մլն ԱՄՆ դոլարը, ստացվել է Գերմանական վերականգնման վարկերի բանկի (KfW) կողմից՝ ջրամատակարարման ոլորտների, էներգետիկայի և հիփոթեքային շուկայի զարգացման վարկային ծրագրերի շրջանակում:

2013 թվականին արտաքին պետական վարկերի հիմնական գումարի մարումները կազմել են 811.0 մլն ԱՄՆ դոլար (որից 500 մլն ԱՄՆ դոլարը Ռուսաստանի Դաշնությունից ստացված վարկի ամբողջական մարումն է), իսկ տոկոսավճարները՝ 50.2 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համապատասխանաբար 184.4 մլն ԱՄՆ դոլարի և 55.0 մլն ԱՄՆ դոլարի փոխարեն: Արտաքին պետական վարկերի սպասարկման ծավալներից 195.3 մլն ԱՄՆ դոլարը կամ արտաքին պետական վարկերի սպասարկման շուրջ 22.7%-ը կազմել է ՀՀ կենտրոնական բանկի արտաքին վարկերի սպասարկումը, ինչը նախորդ տարի կազմել էր 124.6 մլն ԱՄՆ դոլար: Ընդ որում, ԱՄՀ վարկերի դիմաց ՀՀ կենտրոնական բանկը և ՀՀ կառավարությունը վճարել են 8.1 մլն ԱՄՆ դոլար տոկոսագումար և իրականացրել 273.6 մլն ԱՄՆ դոլար հիմնական գումարի մարում:

Վերը նշված հոսքերի արդյունքում 2013 թվականին Հայաստանի արտաքին պետական վարկերի զուտ արտահոսքը (արտաքին վարկերի գծով ներգրավված ֆինանսական միջոցների և վճարված հիմնական գումարի տարբերություն) կազմել է 491.6 մլն ԱՄՆ դոլար, սակայն, պայմանավորված տարվա ընթացքում ճապոնական իենի նկատմամբ ԱՄՆ դոլարի էական՝ 21.9% արժևորմամբ, ՀՀ արտաքին պետական վարկերի մնացորդը նվազել է ավելի շատ՝ 536.2 մլն ԱՄՆ դոլարով:

Աղյուսակ 2. ՀՀ արտաքին պետական վարկերի մնացորդների կառուցվածքն ըստ արժույթների (%)

Արժույթ	2011	2012	2013
ՀՓԻ	62.9	60.6	67.3
ԱՄՆ դոլար	19.9	21.3	11.6
Իեն	11.1	9.5	9.1
Եվրո	6.0	8.5	11.8
Այլ	0.1	0.1	0.2

2013 թ. ՀՓԻ նկատմամբ ԱՄՆ դոլարի փոխարժեքի արժեզրկման հետևանքով Համաշխարհային բանկից, Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամից, Ասիական զարգացման բանկից և ԱՄՀ-ից ՀՓԻ-ով ներգրավված պարտքը աճել է 4.3 մլն ԱՄՆ դոլարով: Իսկ եվրոյի նկատմամբ ԱՄՆ դոլարի փոխարժեքի արժեզրկման հետևանքով եվրոյով ներգրավված պարտքն ավելացել է 16.7 մլն ԱՄՆ դոլարով՝ նախորդ տարվա 6.2 մլն ԱՄՆ դոլար աճի փոխարեն: Ճապոնական իենի նկատմամբ ԱՄՆ դոլարի փոխարժեքի արժևորման հետևանքով Ճապոնիայից ներգրավված պարտքը նվազել է 63.7 մլն ԱՄՆ դոլարով՝ նախորդ տարվա 38.9 մլն ԱՄՆ դոլար նվազման փոխարեն: Փոխարժեքների տատանման հետևանքով արտաքին վարկերի մնացորդը նվազել է 42.7 մլն ԱՄՆ դոլարով: Նշենք նաև, որ հիմնական արժույթների նկատմամբ ՀՀ դրամի արժեզրկման հետևանքով դրամային արտահայտությամբ աճել են ինչպես Կառավարության արտաքին վարկերի սպասարկման ծախսերը, այնպես էլ ներգրավված վարկերի ծավալները:

Աղյուսակ 3. ՀՀ արտաքին պետական վարկերի կառուցվածքը

Աղբյուրը	2011 թ. վերջի դրությամբ		2012 թ. վերջի դրությամբ		2013 թ. վերջի դրությամբ	
	մլն ԱՄՆ դոլար	տես. կշիռ (%)	մլն ԱՄՆ դոլար	տես. կշիռ (%)	մլն ԱՄՆ դոլար	տես. կշիռ (%)
Բազմակողմանի	**2475.4**	**69.4**	**2638.9**	**70.6**	**2637.0**	**82.4**
Համաշխարհային բանկ և Գյուղ. զարգ. գործակալություն	1403.2	39.3	1537.5	41.1	1652.4	51.6
ԱՄՀ	827.5	23.2	776.1	20.8	584.8	18.3
Ասիական զարգացման բանկ (ADB)	165.3	4.6	187.9	5.0	227.9	7.1
Եվրոմիություն	33.6	0.9	85.7	2.3	89.7	2.8
Նավթ արդյունահանող երկրների կազմակերպություն (OPEC)	28.3	0.8	30.7	0.8	34.3	1.1
Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ (EBRD)	13.7	0.4	14.3	0.4	25.8	0.8
Եվրոպական ներդրումային բանկ	3.9	0.1	6.6	0.2	22.1	0.7
Երկկողմ	**1092.8**	**30.6**	**1099.4**	**29.4**	**565.1**	**17.6**
Ռուսաստան	500.0	14.0	500.0	13.4	-	-
Ճապոնիա	397.2	11.1	355.9	9.5	290.8	9.1
Գերմանիա	155.0	4.3	193.1	5.2	219.8	6.9
ԱՄՆ	27.6	0.8	25.9	0.7	24.2	0.8
Ավստրիա (Raiffeisen Bank International AG)	-	-	8.7	0.2	11.0	0.3
Ֆրանսիա	4.1	0.1	4.0	0.1	5.2	0.2
Աբու-Դաբի	3.1	0.1	4.2	0.1	5.1	0.2
Բելգիա (KBC Bank NV)	2.2	0.1	4.2	0.1	5.7	0.2
Լինսի հիմնադրամ	3.5	0.1	3.3	0.1	3.3	0.1
ԸՆԴԱՄԵՆԸ	**3568.2**	**100.0**	**3738.3**	**100.0**	**3202.1**	**100**

Չնայած որոշ միջազգային տոկոսադրույքների[29] աճին[30], պարտքի ներկա արժեքը նախորդ տարվա համեմատ ավելացել է՝ կազմելով 3820.2 մլն ԱՄՆ դոլար (նախորդ տարի՝ 3411.8 մլն ԱՄՆ դոլար): Աճը հիմնականում պայմանավորված է ոչ արտոնյալ պայմաններով եվրոպարտատոմսերի թողարկմամբ:

[29] Արտաքին պարտքի ՆԱ հաշվարկման ժամանակ որպես զեղչման տոկոսադրույք սովորաբար օգտագործվում է CIRR տոկոսադրույքը: Այս տոկոսադրույքները հաշվարկվում և հրապարակվում են Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD) կողմից:

[30] Եթե նախորդ տարվա նկատմամբ տոկոսադրույքները մնային անփոփոխ, ապա արտաքին պարտքի ՆԱ-ն 2013 թվականին կկազմեր ավելի շատ՝ մոտ 3928.1 մլն ԱՄՆ դոլար:

Հարկ է նշել, որ որքան պարտքի ներկա արժեքը փոքր է պարտքի անվանական արժեքից, այնքան պարտքի պայմաններն արտոնյալ են, այսինքն՝ պարտքի բեռը փոքր է:

Աղյուսակ 4. ՀՀ արտաքին պետական վարկերի տրամադրման պայմանները*

Ցուցանիշներ	2010	2011	2012	2013
Տոկոսադրույք (%)	1.3	1.4	1.3	1.9
Մարման ժամկետ (տարի)	26.1	24.8	24.6	23.3
Գրանտ-էլեմենտ (%)	32.4	30.2	23.3	23.8
Արտոնյալ վարկեր (%՝ ամբողջ պարտքի մեջ)	61.1	56.2	30.8	39.1
Հաստատագրված տոկոսադրույքով վարկեր (%՝ ամբողջ պարտքի մեջ)	63.6	63.0	63.7	80.4
** Հաշվարկված են միջին կշռված ցուցանիշների հիման վրա:*				

Երկրի արտաքին պարտքի վերլուծության ու պարտքի բեռի գնահատման համար արտաքին պարտքը սովորաբար դիտարկվում է մի շարք մակրոտնտեսական ցուցանիշների հետ հարաբերության մեջ: Արտաքին պարտքի հարաբերական ցուցանիշները արտաքին պարտքի սպասարկման հետ կապված հնարավոր ռիսկերի բնութագրիչներ են: Այդ ցուցանիշների միջոցով գնահատվում է երկրի վճարունակության և իրացվելիության մակարդակը, ինչը նպաստում է արտաքին պարտքի արդյունավետ կառավարմանն ու առկա խնդիրների ժամանակին բացահայտմանը: Արտաքին պարտքի բեռի գնահատման համար Համաշխարհային բանկն օգտագործում է արտաքին պարտք/ՀՆԱ, արտաքին պարտքի ՆԱ/ՀՆԱ, արտաքին պարտք/ապրանքների և ծառայությունների արտահանում, արտաքին պարտքի ՆԱ/ապրանքների և ծառայությունների արտահանում հարաբերությունները:

Արտաքին պարտքի բեռի գնահատման ցուցանիշների հաշվարկի համար Համաշխարհային բանկը, բացի պարտքի ՆԱ-ից, օգտագործում է նաև պարտքի անվանական ծավալները, քանի որ մի շարք երկրների արտաքին պարտքի ՆԱ-ն հնարավոր չէ հաշվարկել արտաքին պարտքի վերաբերյալ մանրամասն տեղեկատվության բացակայության պատճառով:

Աղյուսակ 5. ՀՀ արտաքին պարտքի բեռի գնահատման ցուցանիշները 2010 - 2013 թվականներին (%)

Ցուցանիշներ	2010	2011	2012	2013
Արտաքին պարտք / ապրանքների և ծառայությունների արտահանում[31]	319.2	300.6	299.7	318.1
Արտաքին պետական պարտք/ապրանքների և ծառայությունների արտահանում[31]	174.0	150.3	152.2	148.2
Արտաքին պարտք/ՀՆԱ[32]	66.2	75.7	77.2	82.5
Արտաքին պետական պարտք/ՀՆԱ[32]	36.1	37.9	39.2	38.4
Կարճաժամկետ արտաքին պարտք/պահուստներ	35.1	46.8	46.8	51.1

Աղյուսակ 6. ՀՀ համախառն արտաքին պարտքի դիրքերը

մլն ԱՄՆ դոլար

	2010 թ. վերջի դրությամբ	*2011 թ. վերջի դրությամբ*	*2012 թ. վերջի դրությամբ*	*2013 թ. վերջի դրությամբ*
Պետական կառավարման մարմիններ	**2737.2**	**2955.8**	**3154.9**	**3405.0**
Կարճաժամկետ	1.3	0.4	0.0	0.0
Կանխիկ դրամական միջոցներ և ավանդներ	-	-	-	-
Պարտքի գործիքներ	1.3	0.4	0.0	0.0
Վարկեր	-	-	-	-
Առևտրային վարկեր և կանխավճարներ	-	-	-	-
Այլ պարտքային պարտավորություններ	-	-	-	-
Երկարաժամկետ	2735.9	2955.4	3154.9	3405.0
Հատուկ փոխառության իրավունք (ՀՓԻ), տեղաբաշխում	-	-	-	-
Կանխիկ դրամական միջոցներ և ավանդներ	-	-	-	-
Պարտքի գործիքներ	0.1	0.5	0.5	702.0

[31] *Ցուցանիշը հաշվարկված է դոլարային համարժեքով:*
[32] *Ցուցանիշը հաշվարկված է դրամային համարժեքով:*

	2010 թ. վերջի դրությամբ	*2011 թ. վերջի դրությամբ*	*2012 թ. վերջի դրությամբ*	*2013 թ. վերջի դրությամբ*
Վարկեր	2735.8	2954.9	3154.5	2703.0
Առևտրային վարկեր և կանխավճարներ	-	-	-	-
Այլ պարտքային պարտավորություններ	-	-	-	-
Կենտրոնական բանկ	**699.8**	**754.1**	**731.6**	**644.7**
Կարճաժամկետ	0.4	0.2	0.2	0.3
Կանխիկ դրամական միջոցներ և ավանդներ	0.2	0.1	0.0	0.1
Պարտքի գործիքներ	-	-	-	-
Վարկեր	-	-	-	-
Առևտրային վարկեր և կանխավճարներ	0.1	0.0	0.1	0.1
Այլ պարտքային պարտավորություններ	0.1	0.1	0.0	0.0
Երկարաժամկետ	699.4	753.9	731.4	644.5
Հատուկ փոխառության իրավունք (ՀՓԻ), տեղաբաշխում	135.6	135.1	135.2	135.5
Կանխիկ դրամական միջոցներ և ավանդներ	-	-	-	-
Պարտքի գործիքներ	-	-	-	-
Վարկեր	563.8	618.7	596.1	509.0
Առևտրային վարկեր և կանխավճարներ	-	-	-	-
Այլ պարտքային պարտավորություններ	-	-	-	-
Ավանդային կազմակերպություններ, բացի Կենտրոնական բանկից	**1127.8**	**1607.3**	**1923.5**	**2402.0**
Կարճաժամկետ	429.5	608.7	617.5	972.7
Կանխիկ դրամական միջոցներ և ավանդներ	338.5	460.1	462.8	796.4
Պարտքի գործիքներ	-	-	-	-
Վարկեր	73.1	134.6	119.9	125.2
Առևտրային վարկեր և կանխավճարներ	-	-	-	13.8
Այլ պարտքային պարտավորություններ	17.9	14.0	34.9	37.3
Երկարաժամկետ	698.4	998.6	1306.0	1429.3
Կանխիկ դրամական միջոցներ և ավանդներ	94.2	184.6	164.7	351.9
Պարտքի գործիքներ	23.1	5.8	12.6	10.5
Վարկեր	581.1	808.2	1128.7	1066.9
Առևտրային վարկեր և կանխավճարներ	-	-	-	-
Այլ պարտքային պարտավորություններ	-	-	-	-
Այլ հատվածներ	**1108.0**	**1200.0**	**896.7**	**1347.4**
Կարճաժամկետ	224.5	294.4	224.2	176.9
Կանխիկ դրամական միջոցներ և ավանդներ	-	-	-	-
Պարտքի գործիքներ	-	-	-	-
Վարկեր	157.6	224.9	149.5	135.2
Առևտրային վարկեր և կանխավճարներ	59.8	64.0	68.4	33.1
Այլ պարտքային պարտավորություններ	7.1	5.5	6.4	8.7
Երկարաժամկետ	883.5	905.6	672.4	1170.5
Կանխիկ դրամական միջոցներ և ավանդներ	-	-	-	-
Պարտքի գործիքներ	-	-	-	-
Վարկեր	772.8	761.9	563.3	1073.2
Առևտրային վարկեր և կանխավճարներ	64.3	87.3	38.8	26.2
Այլ պարտքային պարտավորություններ	46.4	56.4	70.2	71.1
Ուղղակի ներդրումներ՝ միջֆիրմային վարկեր	**633.8**	**900.4**	**949.4**	**895.5**
Համախառն արտաքին պարտք	**6306.6**	**7417.6**	**7656.0**	**8694.6**

© Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ, 2014